ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1919

YEREVAN STATE UNIVERSITY

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

САРКИС ГРИГОРЯН

# ИСЛАМСКИЙ РАДИКАЛИЗМ НА КАВКАЗЕ

(крайне радикальные проявления и современные тенденции)

---

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

SARGIS GRIGORYAN

# ISLAMIC RADICALISM IN THE CAUCASUS

(expressions of radical extremism and its current trends)

ЕРЕВАН YEREVAN
2017

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

(ծայրահեղ արմատական դրսևորումներն
ու ներկա միտումները)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Գ 888

Տպագրության է երաշխավորել
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը

**Խմբագիր՝** պ. գ. թ., դոցենտ **Վ. Ս. Պետրոսյան**
**Գրախոսներ՝** պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Վ. Ա. Բայբուրդյան**
պատմական գիտությունների
դոկտոր **Ռ. Կ. Կարապետյան**

Գրիգորյան Սարգիս
Գ 888 Իսլամական արմատականությունը Կովկասում (ծայրահեղ արմատական դրսևորումներն ու ներկա միտումները)/ Ս. Գրիգորյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2017.- 126 էջ:

Սույն մենագրությունում փորձ է արվում ուսումնասիրել Կովկասյան տարածաշրջանում իսլամական (սուննիական) ծայրահեղ արմատական արդի դրսևորումները, բացահայտել կովկասցի իսլամականների, խմբավորումների ու դրանց առաջնորդների ակտիվությունը Կովկասից դուրս: Գիրքը նախատեսված է կովկասագետների, միջազգայնագետների, քաղաքագետների, արևելագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0

ISBN 978-5-8084-2250-6

© ԵՊՀ հրատ., 2017
© Ս. Գրիգորյան, 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ................................................................................................ 7

ԳԼՈՒԽ I
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ .............. 17
1.1. Իսլամական արմատականություն (ֆունդամենտալիզմ), սալաֆիականություն, վահաբականություն .............................. 17
1.2. Իսլամական արմատականության առաջացումը Կովկասում ........................................................................ 21

ԳԼՈՒԽ II
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ................................................................... 25
2.1. Ակտիվացող իսլամական ծայրահեղ արմատականությունը Կովկասյան տարածաշրջանում .................................................. 25
2.2. Կովկասցի իսլամականների ներգրավումը մերձավորարևելյան զարգացումներին ..................................... 44
2.3. «Կովկասի վիլայեթի» հռչակումն ու ստեղծված իրավիճակը Կովկասյան տարածաշրջանում .................................................. 53
2.4. Իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների կառուցվածքային առանձնահատկությունները Կովկասում («Կովկասի Էմիրության» օրինակով) ........................................... 61

ԳԼՈՒԽ III
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ........................................ 65
3.1. Իսլամական արմատականությունն Ադրբեջանում.................. 65
3.2. Ադրբեջանում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցները.......................................................................... 70
3.3. Ադրբեջանական իսլամական ծայրահեղ արմատական կառույցներն ու առաջնորդները Մերձավոր Արևելքում ......... 76
3.4. Իսլամական ծայրահեղ արմատականությունը Վրաստանում.................................................................................. 91

ՎԵՐՋԱԲԱՆ ................................................................................. 102

Резюме ........................................................................................ 106

Summary ...................................................................................... 108

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ................................................................................... 110

ՀԱՎԵԼՎԱԾ.................................................................................. 123

## ՆԱԽԱԲԱՆ

Վերջին տարիներին Կովկասյան տարածաշրջանում[1] նկատվում է սուննի իսլամական արմատական, մասնավորապես ծայրահեղ արմատական տրամադրությունների աճ[2]:

Կովկասում իսլամական ծայրահեղ արմատականության դրսևորման պատճառներից են՝ կրոնական համընդհանուր անհանդուրժողականությունը, միջքաղաքակրթական լարվածությունը, մուսուլմանական հանրույթի ներքին կյանքում և արտաքին հարաբերություններում այս կամ այն խնդիրների լուծման համար բռնի գործողությունները և այլն:

Տարածաշրջանային անկայունությունը (Չեչենական պատերազմներ, Ղարաբաղյան հակամարտություն և այլն) պարարտ

---

[1] Կովկասյան տարածաշրջանը Սև և Կասպից ծովերի միջև ընկած հատվածն է, որն ընդգրկում է Ռուսաստանի որոշ շրջանները, Վրաստանը, Ադրբեջանն ու Հայաստանը (Տե՛ս Encyclopedia Britannica, Caucasus, https://www.britannica.com/place/Caucasus), սակայն մենագրությունում Կովկաս կամ Կովկասյան տարածաշրջան ասելով՝ նկատի ենք ունեցել դրա հյուսիսային՝ Ռուսաստանի մաս կազմող հատվածը, ինչպես նաև Վրաստանն ու Ադրբեջանը:

[2] Սուննիական իսլամական արմատականությունը բազմաբնույթ և բազմաբովանդակ երևույթ է, որի բաղկացուցիչները բազմազան են՝ սկսած իսլամի չափավոր արմատական դրսևորումներից մինչև ծայրահեղ արմատականություն: Մենագրությունն անվանելով «Իսլամական արմատականությունը Կովկասում (ծայրահեղ արմատական դրսևորումներն ու ներկա միտումները)»՝ փորձ է արվում ներկայացնել վերոհիշյալ բնորոշիչի միայն ծայրահեղ արմատական բաղկացուցիչը Կովկասում: Այնուամենայնիվ, ընթերցողին շփոթության մեջ չգցելու համար մենագրության առաջին գլխի առաջին ենթագլխում տրված են թե՛ իսլամական արմատականություն, թե՛ ծայրահեղ արմատականություն հասկացությունների նկարագրությունները:

հող է դարձել իսլամական արմատականության համար՝ զինյալների հավաքագրման և ջիհադական պայքար իրականացնելու առումով: Կովկասը ներկայացնող իսլամականները ներքաշված են ջիհադական ակտիվ պայքարի մեջ ինչպես Կովկասում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Մերձավոր Արևելքում կռվող օտարերկրացի իսլամականների զգալի հատվածը սերում է հենց Կովկասյան տարածաշրջանից:

Իսլամական ծայրահեղ արմատականության տարածմանը նպաստում են տարածաշրջանային, միջազգային և համընդհանուր մի շարք գործոններ:

Մուսուլմանական երկրներում և աշխարհի մուսուլմանաբնակ հատվածներում աճող ճգնաժամերը, որոնք ուղեկցվում են այնպիսի իրողություններով, ինչպիսիք են՝ գործազրկությունը (հատկապես երիտասարդների շրջանում), ծնելիության բարձր մակարդակը, առողջապահական ծառայությունների ցածր մակարդակը, հանցագործության աճն ու չարաշահումները, պարարտ հող են ստեղծում իսլամական ծայրահեղ արմատական գաղափարների տարածման համար, որոնք փորձում են փոխել հասարակական-քաղաքական առկա կարգերը:

ԽՍՀՄ փլուզումից հետո հատկապես Կովկասյան տարածաշրջանում ազգային-պետական նոր միավորների առաջ գալը նույնպես նպաստեց այս հատվածներում իսլամական, այդ թվում՝ արմատական գաղափարների տարածմանն ու առաջացած հասարակական-քաղաքական վակուումը այդ գաղափարներով լցնելուն:

Հիշյալ գործոններից է նաև մուսուլմանական որոշ երկրների կողմից իսլամական արմատական գաղափարների տարածումը, իսկ առանձին դեպքերում՝ իսլամական ծայրահեղ արմատականության ֆինանսավորումն ու աջակցությունը:

Իսլամական ծայրահեղ արմատականության տարածմանը նպաստող գործոններից է նաև մուսուլմանական աշխարհում նկատվող ռազմական բախումները, էթնիկ-դավանական հողի վրա տարածաշրջանային հաճախադեպ հակամարտությունները, որոնց նույնպես մասնակից են իսլամական ծայրահեղ արմատական կառույցները:

Իսլամական ծայրահեղ արմատականությունը օգտվում է նաև մուսուլմանական աշխարհից դուրս գտնվող մուսուլմանների որոշ հատվածի ծառայություններից: Իսլամականները, որոնք միգրացիոն մեղմ քաղաքականության հետևանքով հայտնվում են արևմտյան երկրներում, կարողանում են ստեղծել իսլամական ծայրահեղական ցանցային համակարգ: Այդ ամենը «փախստականներին» թույլ է տալիս օգտվել հաղորդակցության հնարավորություններից, ֆինանսական հոսքերից և ստեղծել անկախ, ուժեղ և գրեթե անխոցելի իսլամական բջիջներ, որոնց անդամագրվածներն աչքի են ընկնում բռնարարքներով և ահաբեկչական գործողություններով:

Կովկասյան տարածաշրջանում իսլամական արմատականությունը փորձում է ներթափանցել հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառներ: Այս պարագայում հատկապես ակտիվ են այն մուսուլմանները, որոնք կյանքի այս կամ այն խնդրի լուծման բանալին փնտրում են կրոնական դոգմաների մեջ և պատրաստ են հասարակական բարքերն ու մուսուլմանական համայնքի վիճակը լավացնելու համար անմիջապես գործի անցնել:

Ղուրանին և Սուննային տառացի հետևելու քարոզից զատ՝ իսլամական ծայրահեղ արմատական գաղափարախոսները ցուցաբերում են սուբյեկտիվ և իրենց շահերից բխող մոտեցումներ այս կամ այն դրույթները մեկնաբանելիս: Դա հնարավորություն է ընձեռում իսլամականներին խարխլել Կովկասում ազդեցիկ դիրքեր ունեցող այսպես կոչված «ավանդական» իսլամի ազդեցիկու-

թյունը, կամայականորեն մեկնաբանել սուրբ տեքստերում առկա դրույթները, «արդիականացնել» դրանք, «մաքրազերծել» միստիկական տարրերից և տեղական ավանդույթներից: Բացի դա, իսլամական արմատական գաղափարախոսությունը փորձում է անհատին դուրս բերել հասարակական ինստիտուտների ազդեցությունից, որոնց ավանդական կառուցվածքը, հոգևոր-բարոյական նկարագիրը խորթ են հատկապես փոփոխությունների ձգտող երիտասարդի համար: Իսլամական ծայրահեղ արմատականությունը կազմակերպված, զինված ուժ է, որը ձգտում է «պաշտպանել» իր հետևորդին՝ խոստանալով հնազանդություն, հավասարություն և արդարություն: Այսպիսով, իսլամական ծայրահեղ արմատական գաղափարական հայեցակարգը, անհատի հասարակական-քաղաքական ակտիվության շեշտադրմամբ, համախմբման «արդյունավետ» միջոց է ծառայում անարդարության և անօրինականության դեմ պայքարում:

Կովկասում նաև տեսանելի են իսլամի ավանդական ուղղությունների (սուննիական կրոնա-իրավական դպրոցներ (մազհաբներ), շիայականություն, սուֆիական միաբանություններ և այլն) և ծայրահեղ արմատական իսլամի հետևորդների միջև հակասությունների խորացում:

Հայաստանի Հանրապետության՝ մուսուլմանական երկրներով և մուսուլմաններով բնակեցված տարածքներով (Հայաստանի հետ Վրաստանի սահմանակից որոշ հատվածները ևս մուսուլմանաբնակ են) շրջապատված լինելը, առաջնահերթ է դարձնում Կովկասում իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով սնվող կառույցների, դրանց առաջնորդների տեսակետների ուսումնասիրությունը: Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությունը կարևոր է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության տեսանկյունից, քանզի դեռևս լուծված չէ արցախյան հիմնախնդիրը, որին ժամա-

նակին Բաքուն փորձում էր տալ կրոնական բնույթ:

Ադրբեջանի Հանրապետությունում նկատվող իսլամական ծայրահեղ արմատական միտումների աճը որոշակի սպառնալիք է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգությանը: Ադրբեջանի քաղաքական և հոգևոր շրջանակներից ադրբեջանական հասարակությունում օր օրի ավելացող իսլամական ծայրահեղ արմատական միտումներն ընդդեմ հայկական երկու պետությունների ուղղորդելու կոչեր են հնչում՝ դրանց հաղորդելով հայատյաց, էթնոկրոնական բովանդակություն:

Բացի դա, Մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցող ռազմական գործողությունները, դրանցում կովկասցի իսլամականների ակտիվությունը, նկատվող էթնոդավանական հակամարտությունները, Միջին Արևելքի քրիստոնեական համայնքների հանդեպ ճնշումները կարող են ուղղակի և անուղղակի մարտահրավեր դառնալ Հայաստանի Հանրապետության անվտանգությանը: Ուստի թեմայի ուսումնասիրությունը կարևոր ու արդիական է դառնում ոչ միայն Կովկասյան տարածաշրջանային հասարակական-քաղաքական, հասարակական-կրոնական տեղաշարժերի ու գործընթացների, այլ նաև Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության ռիսկերի գնահատման տեսանկյունից:

Մենագրությունը գրվել է ռուսերեն, անգլերեն, հայերեն և արաբերեն լեզուներով տարբեր աշխատությունների, աղբյուրների ու տեղեկատվավերլուծական գրականության հիման վրա:

Մենագրության շարադրման գործում կարևորություն են ներկայացրել խորհրդային և ռուսաստանյան հեղինակների կողմից Կովկասյան տարածաշրջանում իսլամի, դրա հասարակական-քաղաքական նշանակության, այդ թվում իսլամական արմատականությանն ու ծայրահեղ արմատականությանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրմանը նվիրված աշխատությունները:

Արդի իսլամական արմատական շարժումները, դրանցում առկա միտումները ճիշտ ընկալելու համար ուշադրության են արժանի, Ա. Վ. Կորովիկովի[3], Ե. Մ. Պրիմակովի[4], Ս. Բ. Ֆիլատովի[5], Վ. Ա. Մալաշենկոյի[6], Լ. Ռ. Պոլոնսկայայի[7], Ն. Վ. Ժդանովի[8], Զ. Ն. Լևինի[9], Դ. Բ. Մալիշևայի[10] և այլոց աշխատությունները: Իսլամական արմատականության հայեցակարգային հիմնադրույթների, դրանցում պատմական և պատմամշակութային վերլուծությունների ընկալման համար ուսումնասիրվել են Լ. Պ. Սյուկիայնենի[11], Ա. Ա. Իգնատենկոյի[12], Ս. Լ. Ազաևի[13], Ռ. Մ. Շարիպովայի[14] և այլնի աշխատությունները: Կովկասում իսլամական արմատականությանն առնչվող հիմնադրույթների բացահայտման համար ուսումնասիրվել են Ի. Պ. Դոբաևի[15], Կ. Մ. Խան-

---

[3] **Коровиков А.**, Исламский экстремизм в арабских странах, М. 1990.

[4] **Примаков Е.,** Восток после краха колониальной системы. М, 1982.

[5] **Филатов С.,** Фундаментализм. Возврашение к основам: Протестанский фундаментализм, М. 2003.

[6] **Малашенко В.,** Мусульманский мир СНГ, М., 1996.

[7] **Полонская Л.,** Вафа А.Х. Восток: идеи и идеологи: (Критика буржуазных н мелкобуржуазных концепций "трегьего пути" развития). М., 1982.

[8] **Жданов Н.,** Исламская концепция миропорядка, М.: Междунар. Отношения. 2003., **Жданов Н. В., Игнатенко А.,** Ислам на пороге XXI века.- М., 1989.

[9] **Левин З.,** Фундаментализм, М. 2003.

[10] **Малышева Д.,** Исламско-фундаменталистский проект в реалиях современного мира: Мировая экономика и международные отношения N 7 1999.

[11] **Сюкияйнен Л.,** Шариат и мусульманско-правовая культура.-М.Институт государства и права РАН. 1997.

[12] **Игнатенко А.,** Халифы без халифата. М., 1988.

[13] **Агаев С.,** Иранская революция: воспоминания о будущем.Народы Азии и Африки. 1989.

[14] **Шарипова Р.,** Панисламизм сегодня: идеология и практика Лиги исламского мира. М. 1986.

[15] **Добаев И. П.,** Исламский радикализм: генезис, эволюция, практика, Ростов-на-Дону: Издательство СКНЦ ВШ, 2002, **Добаев И. П., Немчина В. И.,** Новый терроризм в мире и на Юге России: сущность, эволюция, опыт противодействия Ростов н/Д., 2005.

բաբաևի[16], Վ. Խ. Ակաևի[17], Ի. Տեկուշևի, Կ. Շևչենկոյի[18], Ռ.Գ. Գաջիևի[19] արժեքավոր աշխատությունները:

Արևմտյան հեղինակներից մենագրության շարադրման ժամանակ օգտագործվել են Գ. Գրյունեբաումի[20], Ռ. Ֆայրստոնի[21], Ա. Ռաշիդի[22] և այլոց հոդվածներն ու ուսումնասիրությունները: Իսլամական գործոնի և իսլամական արմատականության հետ կապված հիմնախնդիրները ուսումնասիրված են Բ. Լոուրենսի[23], Բ. Լյուիսի[24], Դ. Փայփսի[25], Ժ. Կեպելի[26], Ռ. Բոնիի[27], Մ. Բոների[28], Դ. Քուկի[29], Դ. Քիբլի[30], Ջ. Էսպոզիտոյի[31], Ռ. Գունարատնայի[32],

---

[16] **Ханбабаев К. М.,** Суфизм в Дагестане // Ислам и политика на Северном Кавказе. Сборник научных статей. / Северо-Кавказское обозрение Центра системных региональных исследований и прогнозирования ИППК при РГУ. Вып.1 / Отв. ред. В. В.Черноус. Ростов н/Д, 2001.

[17] **Акаев В.Х.,** Ислам в Чеченской республике, Москва, 2008, **Акаев В.Х.,** Суфизм и Ваххабизм на Северном Кавказе, Москва, 1999.

[18] **Текушев И., Шевченко К.,** Ислам на Северном Кавказе: История и Современность, Прага, Medium Orient, 2011

[19] **Гаджиев Р.Г.,** Ваххабитский фактор в Кавказской геополитике, Грозный, 2004.

[20] **Грюнебаум Г.,** Класический ислам: очерки истории, М, Наука, 1988.

[21] **Firestone R.,** Jihad. The Origin of Holy War in Islam, Oxford University Press, 1999.

[22] **Rashid A.,** Jihad: The rise of militant Islam in Central Asia, Yale University Press, New Haven, London, 2002.

[23] **Lawrence B.,** Defenders of God. The Fundamentalist Revolt Against the Modern Age. San Francisco.1989.

[24] **Lewis B.,** Islam and the West. New York-Oxford: Oxford University Press, 1993.

[25] **Pipes D.,** The Long Shadow, Culture and Politics in the Middle East. London. 1989.

[26] **Кепель Ж.,** Джихад: Экспансия и закат исламизма, М. 2004.

[27] **Bonney R.,** Jihad From Quran to bin Laden, New York. Palgrave Macmillan.

[28] **Bonner M.,** Jihad in Islamic History:Doctrines and Practice, New Jersey-Princeton University Press, 2006,

[29] **Cook D.,** Understanding Jihad, Los Angeles-University of California Press.

[30] **Kibble,D.G.,** Understanding Islamic Fundamentalism. Military Review (US Army Publication), Sept.-Oct. 1995.

[31] **Esposito J.,** Unholy War. Terror in the Name of Islam, Oxford: Oxford University Press, 2002.

[32] **Gunaratna R.,** The Al Qaida Training Camps of Afghanistan and Beyond, // The Making of a Terrorist: Recruitment, Training and Root Causes (Ed. Forest,J.F.), Westport,

Թ. Հեգհամերի[33], Գ. Մարանչիի[34] և այլոց արժեքավոր աշխատություններում:

Իսլամական արմատականության ներկայիս իրողություններն ու Կովկասում ծայրահեղ արմատական դրսևորումները հասկանալու համար արժեքավոր են հայ հեղինակներից Դ. Ա. Հովհաննիսյանի[35], Ա. Ա. Փաշայանի[36], Ս. Մ. Գրիգոր-

---

CT: Praeger, 2006, Vol. II., **Gunaratna R.,** Inside Al-Qaeda: Global Network of Terror (London: Hurst and Co., 2002).

[33] **Hegghammer, Th.,** Jihad in Saudi Arabia. Violence and Pan-Islamism since 1979, Cambridge University Press: New York, 2010.

[34] **Marranci G.,** Jihad Beyond Islam, Oxford, Oxford International Publishers Ltd, 2006.

[35] **Հովհաննիսյան Դ.,** Ժամանակակից ծայրահեղ իսլամիստական կառույցների ակունքները («Ջամաաթ ալ-Թաքֆիր»-ը), «Հանրապետական» Հայաստանի հանրապետական կուսակցության հրատարակչություն, Եր. 2003, թիվ 7, 25, **Հովհաննիսյան Դ.,** Սուննիական ծայրահեղականության դրսևորումները. «ներկան» և «ապագան», ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր N7, Երևան, 2015 թ., **Հովհաննիսյան Դ.,** Աշխարհաքաղաքական հակամարտու-թյան նոր միտումներ, Հանրապետական, Հայաստանի հանրապետական կուսակցության հրատարակչություն, 2003, թիվ 3, **Оганесян Д. А.,** Ценностная система ислама: начало пути. // Отечественные записки. М., 2004 номер 1, Он же, Хабар и хадис. XII Республиканская конф. Молодых востоковедов. Ереван 1987. Он же, Хабар в культурном сознании общества доисламской и раннеисламской Аравии. - В кн. Проблемы арабской культуры. – М.: Наука, 1987. Он же, Время и история в исламе и христианстве. – Материалы объединенной сессии кафедр арабск. филологии и семитологии МГУ, ЛГУ, ТГУ и ЕГУ. М.,1992. Он же, К вопросу о переосмыслении категорий времени и пространства. – В сб. Тезисы участников конференции кафедр арабистики и семитологии Ереванского, Московского, Санкт-Петербургского и Тбилисского университетов. – С. Петербург, 2000. Он же, Критерии истины в Коране, в кн.: Сборник статей, посвяшенный 80-летию академика К. Г. Церетели, Тбилиси 2003.

[36] **Փաշայան Ա.,** Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Նորավաք Հիմնադրամ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2014, **Փաշայան Ա.,** Ջիհադ հասկացության և դրա մեկնաբանության հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտ, h. XXII, Եր., 2003, **Փաշայան Ա.** Իսլամական կոնֆերանսև կազմակերպությունը. Նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության նկատմամբ,-Երևան, 2003, **Փաշայան Ա.,** Ալ-Կաիդան ջիհադական շարժման համատեքստում-Հանրապետական թիվ 5(25) 2005:

յանի[37] արժեքավոր աշխատությունները և հոդվածները:

Ադրբեջանում իսլամի առանձնահատկությունների, դրա արմատական ուղղությունների բացահայտման համար արժեքավոր են Ա. Յունուսովի[38] աշխատությունները:

Ուսումնասիրության համար օգտագործված աղբյուրների ցանկում մեծ թիվ են կազմում ինչպես արաբական, այնպես էլ ռուսական ու արևմտյան տարաբնույթ պարբերականները, մամուլը, տեղեկատվական ու վերլուծական էլեկտրոնային կայքերը:

Մենագրության շարադրման ժամանակ օգտագործվել են «Իսլամական պետության» և Կովկասյան տարածաշրջանի իսլամական ծայրահեղ արմատական լրատվական ռեսուրսներում

---

[37] **Գրիգորյան Ս.**, Իսլամական պետություն. Ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, **Գրիգորյան Ս.**, «Ջիհադ» հասկացությունը իսլամի վաղ շրջանում (7-9-րդ դարեր), «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 1(62), Երևան, 2015, **Գրիգորյան Ս.**, «Ալ-Կաիդա»-ի ջիհադական պայքարի նոր միտումները 21-րդ դարի սկզբին. Աբու Մուսաբ Ալ-Սուրիի ռազմավարությունը, Վերլուծական տեղեկագիր h.6: Հոդվածների ժողովածու/ԵՊՀ; Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն; Խմբ. Խորհուրդ.-Եր.: 2013, **Գրիգորյան Ս.**, «Ալ-Կաիդա»-ի ռազմավարական նոր հիմնադրույթների կիրառումը Սիրիայում, Տարածաշրջանն այսօր, Տարածաշրջանային խնդիրներ, Գիտական ամսագիր, 1(4), 2014, **Գրիգորյան Ս.**, Գլոբալ ջիհադի հայեցակարգը 21-րդ դարի սկզբին, Համաշխարհային պատմության հիմնահարցեր. ընկերային կառույց, գաղափարախոսություն, քաղաքական համակարգ: Երիտասարդ պատմաբանների միջբուհական 2-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու: ԵՊՀ պատմության ֆակուլտետ.-Եր.: ԵՊՀ հրատ., 2013, **Գրիգորյան Ս.**, Սիրիական հակամարտության էթնիկդավանականի վերածվելու վտանգը, Տարածաշրջանն այսօր, Տարածաշրջանային խնդիրներ, Գիտական ամսագիր, 1/2013, **Գրիգորյան Ս.**, Սուննիական արմատական գաղափարախոսության արժեհամակարգը 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո («Ալ-Կաիդա»), «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 4(41), Երևան, 2009, **Գրիգորյան Ս.**, «Իսլամական պետություն»՝ ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Վերլուծական տեղեկագիր h.7: Հոդվածների ժողովածու/ԵՊՀ; Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն; Խմբ. Խորհուրդ.-Եր.: 2015:

[38] **Yunusov A**., Islam in Azerbaijan, Institute for Peace and Democracy, Baku, Azerbaijan, 2004.

տեղ գտած տեղեկությունները, կովկասցի իսլամական արմատական առաջնորդների հարցազրույցներն ու ուղերձները, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել Կովկասում իսլամական ծայրահեղ արմատականությանն առնչվող իրավիճակի ու հետագա գործընթացների վերաբերյալ:

# ԳԼՈՒԽ I

# ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

## 1.1. Իսլամական արմատականություն (ֆունդամենտալիզմ), սալաֆիականություն, վահաբականություն

*Իսլամական արմատականություն (ֆունդամենտալիզմ)*[39].

[39] Ֆունդամենտալիզմ հասկացությունը ձևավորվել է ԱՄՆ-ում քրիստոնեության բողոքական ուղղությունում: 1895 թ. Նիագարայում տեղի ունեցած Աստվածաշնչյան կոնֆերանսում հոգևորականների մի խումբ առաջ քաշեց 5 հիմնական «ֆունդամենտալ» սկզբունք, որոնք 1910 թ. հաստատեց Պրեսբիտերական գլխավոր ասամբլեան: Այն ընդունեցին մի շարք պահպանողական կրոնական կազմակերպություններ: 1909-1915 թթ. Կալիֆորնիայում Ռ. Թորրին և Լ. Դիկսոնը տպագրեցին 12 հատորից բաղկացած հոդվածների ժողովածու «The Fundamentals» անվամբ, որտեղ մեկնաբանվում էին այդ թեզերը: 1919 թ. այդ սկզբունքները առավել ընկալելի և ըմբռնելի դարձնելու համար 12 հատորն ամփոփեցին 4 հատորի մեջ և շարունակեցին դրա տարածումն ամբողջ ԱՄՆ-ով և աշխարհով մեկ հիմնականում անվճար: Բողոքականության մտածողության տրամաբանությունը, որը մշակվել էր բողոքականության հիմնադիրներ Մ. Լյութերի, Ժ. Կալվինի, Ջ. Նոկսի և մյուսների կողմից, կառուցվել է դեպի առաջնաստեղծ վիճակի՝ քրիստոնեական հավատքի հիմքերին վերադարձի, քրիստոնեությանը խորթ մշակութային և քաղաքական սկզբունքներից հրաժարվելու, մոդեռնիստական ազդեցություններից ազատվելու, Սուրբ Գրքի բառացի ընկալման շուրջ՝ ընթանալով դեպի անապական ուղղափառություն, որպես հավատքի սկզբնաղբյուր կամ դավանանքի հիմք: 1919 թ. Ֆիլադելֆիայում հիմնվեց համաշխարհային քրիստոնեական ֆունդամենտալիստական ասոցիացիան, որի անդամները «մոդեռնիստներին» և «լիբերալներին» մեղադրեցին քրիստոնեական արժեքների և Ավետարանի նսեմացման համար: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան ֆունդամենտալիստները իրենք իրենց կոչեցին ավետարանչականներ, իսկ ֆունդամենտալիզմ տերմինը

այս հասկացության գիտական հիմնավորման և նրա զանազան դրսևորումների դասակարգման վերջնական տարբերակ դեռևս չկա: Հետազոտությունների ընդհանրական եզրակացությունն այն է, որ իսլամում արմատականությունը հասկացվում է որպես քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար իսլամական զանազան խմբավորումների կողմից պայքարի այնպիսի մեթոդների կիրառում, որոնք միջազգային իրավունքի տեսակետից օրենքի սահմաններից դուրս են[40]: Սակայն, դրան զուգահեռ պետք է փաստել, որ կան իսլամական արմատականության ու վերջինիս հետ կապված երևույթների գնահատման և մեկնաբանման յուրահատկություններ:

*Սալաֆիականություն*[41]. այս տերմինով կարելի է բնորոշել մուսուլմանական հոսանքների և աստվածաբանների այն ընդհանուր ուղղությունը, որն իսլամի գոյության տարբեր ժամանակահատվածներում հանդես է եկել նոր ձևավորված մուսուլմանական ումմայում ապրող մուսուլմանների կենցաղով և դավանական կենսակերպով առաջնորդվելու կոչերով: Այս ուղղությունը դեմ է իսլամական ուսմունքում և մուսուլմանի

---

մնաց շրջանառության մեջ և իր նեղ իմաստով մեկնաբանվում է որպես աստվածաբանական շարժում, որը նպատակաուղղված է պահպանելու այն ամենը, ինչը քրիստոնեության հիմքն է (ֆունդամենտ) (Տե՛ս **Филатов С. Б,** «Фундаментализм». Возвращение к основам, Протестанский фундаментализм, М., 2003, стр. 109-126):

[40] Исламский экстремизм и фундаментализм как угроза национальной безопасности России, Научный отчет Российского института стратегических исследований / Под. Общ. ред. Е. М. Кожокина, М., 1995, стр. 14.

[41] Սալաֆիականությունը (ալ-Սալաֆ ալ-Սալիհուն-السلف الصالحون) իսլամական բարեփոխության նոր հոսանք էր, որը ձևավորվեց Եգիպտոսում 19-րդ դարի վերջում, և որի նպատակն էր իսլամի վերադարձը դեպի Մուհամմադ մարգարեի, առաջին չորս խալիֆների և ուղղափառ նախնիների ժամանակաշրջանի իսլամական ավանդույթները (Տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume VIII, Leiden, E. J. Brill, 1995, p. 900):

ամենօրյա կյանքում որևէ նորարարության՝ սկսած Ղուրանի խորհրդանշական-այլաբանական մեկնաբանությունից մինչև Արևմուտքի հետ հարաբերություններով պայմանավորված իսլամում ի հայտ եկած զանազան նորարարությունները: Այսպիսով՝ իսլամում սալաֆիական զանազան հոսանքները դավանական խնդիրների լուծման մեջ առաջնորդվում են «Ահլ ալ-Սալաֆի» (ʾAhl al-Salaf-أهل السلف) փորձով[42]:

*Վահաբականություն*[43]. 18-րդ դարի կեսին Արաբական թերակղզում Մուհհամադ իբն Աբդ Ալ-Վահաբի կողմից հիմնված վահաբական շարժումը նույնպես կարելի է դիտարկել ավանդական իսլամի այլընտրանք՝ իսլամը մաքրազերծելու տրամադրությունների համատեքստում: Ձևավորվելով որպես կրոնի մաքրազերծմանն ուղղված հոսանք՝ վահաբականությունը հետագայում վերածվեց մուսուլմանական աշխարհի գաղափարական-քաղաքական ազդեցիկ գործոնի, որի հիմքում հաճախ դրվում էր ծայրահեղական գաղափարներ: Մուսուլմանական հասարակության գիտակցության մեջ աստիճանաբար ներարկվում էր նաև այն ըմբռնումը, որ մուսուլմանական շատ արմատական հոսանքներ վահաբականության հետ ոչ մի առնչություն չունեն[44]:

Վերոշարադրյալի համատեքստում տարբերություն է դրվում մի կողմից արմատականների, որոնք կոչ են անում վերադառնալ դեպի իսլամական ավանդույթները, իսկ մյուս կողմից՝ սալաֆիականների միջև, որոնց՝ Ղուրանի տառացի մեկնաբանությու-

---

[42] Տե՛ս **Makdisi, G**. The Conflict of Traditionalism and Modernism in the Muslim Middle East, Texas, 1966, p. 56.

[43] Վահաբականությունը 18-րդ դարի կեսին Արաբական թերակղզում հիմնադրված կրոնական շարժում էր (Տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume XI, Leiden, E. J. Brill, 2002, p. 39):

[44] Տե՛ս **Мюриэль Э.**, Ваххабизм и фундаментализм: термины-«страшилки». Центральная Азия и Кавказ, Стокгольм, 2000. N I (7)., стр. 133.

նը հանգեցնում է բռնի գործողությունների: Այդ առումով վերջիններս կարող են բաժանվել չափավորների և ծայրահեղականների[45]: Այս սկզբունքից ելնելով՝ այսուհետ աշխատանքի հետագա հատվածներում իսլամական ծայրահեղ արմատականություն, գաղափարախոսություն կամ իսլամական ծայրահեղ արմատական կառույցներ ասելով հասկանալու ենք իսլամական սալաֆիական այն ուղղությունները, որոնք փորձում են բռնության ճանապարհով հասնել իրենց նպատակների իրականացմանը՝ սեփական գաղափարական ուղենիշների հիմնավորման համար մշակելով յուրահատուկ մարտավարական և ռազմավարական հնարքներ ու դրանք ներկայացնելով դեպի «Ահլ ալ-Սալաֆի» ժամանակաշրջանը տանող միակ ճշմարիտ և արդարացված ճանապարհի յուրաքանչյուր իրական մուսուլմանի համար:

---

[45] Տե՛ս **Taheri A.,** Holy Terror. The Inside Story of Islamic Terrorism. Sphere Books Ltd, London, 1989, pp. 12-13.

## 1.2. Իսլամական արմատականության առաջացումը Կովկասում

Կովկասյան տարածաշրջանում իսլամի տարածումը սկզբնավորվեց դեռևս վաղիսլամական ժամանակաշրջանում՝ 7-րդ դարի կեսերից: Կովկասի առանձին հատվածներում այդ գործընթացն ընթացավ տարբեր շրջափուլերով[46]: Արդյունքում Հյուսիսային Կովկասում գերակշռեց սուննիական իսլամը, մասնավորապես դրա հանաֆիական և շաֆիական ուղղությունները: Շաֆիական ուղղությանն են պատկանում չեչենները, ինգուշներն ու դաղստանցիները, իսկ հանաֆիականությունը տարածված է Հյուսիսային Կովկասի կենտրոնական և արևմտյան հատվածներում:

Բացի դա, Հյուսիսարևելյան Կովկասում (Չեչնիա, Դաղստան, Ինգուշեթիա) տարածում է գտել սուֆիականությունը[47], որն այդ հատվածներ ներթափանցեց դեռևս միջնադարում[48]: Սուֆիական միաբանություններից Հյուսիսային Կովկասում տարածված են Նակշբանդիական, Կադիրիական և Շազիլիական ուղղությունները[49]:

---

[46] Տե՛ս **Малашенко А. В.**, Исламские ориентиры Северного Кавказа. стр. 20-21.

[47] Միստիկական ուղղությունն իսլամում:

[48] Տե՛ս **Ханбабаев К. М.,** Суфизм в Дагестане // Ислам и политика на Северном Кавказе. Сборник научных статей. / Северо-Кавказское обозрение Центра системных региональных исследований и прогнозирования ИППК при РГУ. Вып.1 / Отв. ред. В. В.Черноус. Ростов н/Д, 2001. стр. 49.

[49] Տե՛ս **Добаев И. П.**, Исламский радикализм: генезис, эволюция, практика, Ростов-на-Дону: Издательство СКНЦ ВШ, 2002, стр. 217-220.

19-րդ դարի սկզբում իսլամի դիրքերը Կովկասում ամրապնդվեցին, իսկ մուսուլման կրոնագետ աստվածաբանները քաղաքական և գաղափարական բավականին ազդեցիկ ուժ էին: Կովկասյան պատերազմի (1818-1864 թթ.) տարիներին հյուսիսկովկասյան ժողովուրդների հասարակական-քաղաքական կյանքում ավելացան իսլամի դերն ու նշանակությունը: Դաղստանցի առաջնորդների (Ղազի Մուհամմադ, Ղամզաթ Բեկ), իսկ արդեն 1834 թ. իմամ Շամիլի զինվորները սրբազան պատերազմ էին մղում իսլամի կանաչ դրոշի ներքո:

19-րդ դարում Կովկասի իսլամականացման նկրտումների վերջին շրջափուլը կարելի է համարել Շամիլի կողմից իսլամական պետության հիմնումը, որտեղ իշխում էին շարիաթի սկզբունքները: Շամիլը նպատակ էր դրել ոչ միայն դիմակայել ցարական Ռուսաստանին, այլև Հյուսիսային Կովկասում ստեղծել իսլամական նորմերի վրա կառուցված հասարակական կարգեր: Այդ փորձերը չէին կարող անտարբեր թողնել ռուսական կենտրոնական իշխանություններին, որոնք ոչ միայն ռազմական ճանապարհով խնդրի լուծման կողմնակից էին, այլև քայլեր էին ձեռնարկում Կովկասում մուսուլման հոգևորականության դիրքերը թուլացնելու և տեղական ավանդույթները տարածելու ուղղությամբ:

Ցարական բանակից անհնազանդ մուսուլմանների պարտությունը, ինչպես նաև զանգվածային, կազմակերպված պայքարի ձևից անձնական և խմբակային պայքարի մարտավարության անցումը 19-րդ դարի 80-ական թթ. սկզբում հանգեցրեց փակ խմբերի առաջանալուն, որոնք գործում էին իշխանություններից գաղտնի:

1905-1907 թթ. հեղափոխություններից հետո Ռուսաստանում իսլամական շարժումը ստացավ պաշտոնական կարգավիճակ: Ստեղծվեցին համառուսական իսլամական զանազան կազմա-

կերպություններ, որոնք ակտիվ ներքաշվեցին ներռուսական հասարակական-քաղաքական անցուդարձի մեջ: 1917 թ. անկայունությունն ազդեց այդ ակտիվության վրա, չնայած այստեղ ապրող ժողովուրդների համար Ռուսաստանի՝ որպես մեկ միասնական հայրենիքի գաղափարը երկար ժամանակ պահպանում էր իր դիրքերը[50]: 1917 թ. հեղափոխությունների ու դրան հաջորդած քաղաքացիական պատերազմի ընթացքում, որը փոխեց ռուսական կայսրության կառավարման ողջ համակարգը, Ռուսաստանի մուսուլմանաբնակ տարածքներում նկատվեցին կենտրոնական իշխանությունների վերաբերմունքի փոփոխություն իսլամի և մուսուլմանների հանդեպ:

Այդ միտումն ընթացավ առանձին շրջափուլերով՝

1. Խորհրդային կարգերի հաստատման առաջին 7-8 տարիների ընթացքում նկատվեց փոխըմբռնման փնտրտուք և ներքին թշնամու դեմ պայքարում մուսուլման բնակչության հետ դաշնակցելու ձգտումներ:
2. 1920-ական թթ. կեսերից մինչև Հայրենական մեծ պատերազմ ընկած ժամանակահատվածը կենտրոնական իշխանությունների և իսլամի միջև առանձնացավ լարված հարաբերություններով: Ճնշումներ էին գործադրվում հավատացյալների, այդ թվում մուսուլմանների նկատմամբ, և իշխանություններն այլևս հեղինակավոր հոգևորականների կարիքը չունեին և իսլամին վերաբերվում էին որպես բոլշևիկների իշխանության հանդեպ թշնամական տարրի:
3. Հետպատերազմյան շրջափուլն առանձնացավ իշխանության և իսլամի միջև որոշ հանդուրժողական տրամադրություններով: Խորհրդային Միությունում նկատվեց իսլամական շարժման ակտիվություն:

---

[50] Տե՛ս **Матвеев В. А.,** Исторические познания как фактор геополитических свершений. стр. 30.

4. Սակայն 1950-ական թթ. սկզբից մինչև 1980-ական թթ. կեսերը կենտրոնական իշխանությունների և իսլամի միջև նկատվեց լարվածություն, որը պայմանավորված էր տեղերում կենցաղային և ազգային ավանդույթների մասնատման դրսևորումներով:
5. Կենտրոնական իշխանությունների և իսլամի փոխհարաբերությունների վերջին շրջափուլը վերակառուցման տարիներին էր, որն ավարտվեց 1991 թ. ԽՍՀՄ փլուզումով:

1990-ական թթ. Կովկասում իսլամական գաղափարների տարածման վրա իրենց ազդեցությունն ունեցան նաև որոշ արտակովկասյան գործընթացներ: Մասնավորապես, Կովկասում տարաձայնությունների ավելացմանը նպաստեց 1970-ական թթ. կեսերից սկսված նավթի գների պարբերական աճը (արաբական երկրների կողմից արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ նավթային էմբարգոյի կիրառումը պատճառ դարձավ նավթի գների բարձրացման, ինչի հետևանքով ավելացան նավթային երկրների շահույթները): Դրամական մեծ հոսքերը նավթային հսկայական պաշարներ ունեցող Սաուդյան Արաբիային հնարավորություն տվեցին մեծ գումարներ ներդնել ինչպես տարածաշրջանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ իսլամի վահաբական գաղափարների տարածման համար: Բացի դա, Կովկասում իսլամի դիրքերի ամրապնդման և իսլամական, մասնավորապես արմատական գաղափարների տարածման վրա ազդեցին 1978-1979 թթ. Իրանում իսլամական հեղափոխությունն ու 1979-1989 թթ. աֆղանական պատերազմը:

# ԳԼՈՒԽ II

# ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

## 2.1. Ակտիվացող իսլամական ծայրահեղ արմատականությունը Կովկասյան տարածաշրջանում

1990-ական թթ. սկզբին ԽՍՀՄ փլուզումից և Կովկասյան տարածաշրջանում անկախ պետությունների ձևավորումից հետո իսլամական արմատականությունն ակտիվորեն ներքաշվեց Կովկասում տեղի ունեցող գործընթացների մեջ:

1990-ական թթ. Կովկասյան տարածաշրջանում «ավանդական» իսլամի և իսլամական արմատականության միջև նկատվող հակասությունները սկզբնական շրջանում ունեին դոգմատիկ, գաղափարական բնույթ, որոնք հետագայում ընդունեցին քաղաքական և ռազմական ուղղվածություն[51]:

Կովկասում իսլամական արմատականության հետևորդները սկսեցին հանդես գալ «ավանդական» իսլամի (հիմնականում Կովկասում տարածված սուֆիական միաբանությունների) մաքրազերծման, դեպի Մուհամմադ մարգարեի և չորս ուղղափառ խալիֆների ժամանակաշրջան վերադառնալու դիրքերից: Այդ առումով առաջ էին քաշվում իսլամական արմատական գաղափարական սկզբունքներով առաջնորդվելու հայացքներ՝ մեղադ-

[51] IslamRF.ru, Вахит Акаев, В Чечне Ислам является фактором, цементирующим общество, http://www.islamrf.ru/news/rusopinions/russia/5006.

րելով «ավանդական» իսլամի կողմնակիցներին հավատուրացության, իսլամի ակունքներից հեռանալու և կռապաշտության մեջ[52]:

1990-ական թթ. մուսուլմանական աշխարհում, այդ թվում Կովկասում նկատվեց իսլամական ծայրահեղ արմատական գաղափարական դրույթների և վերջիններիս գործնական կիրարկումների զուգակցում, որը դարձավ իսլամական ծայրահեղ արմատականության ակտիվության պատճառներից մեկը:

Այս համատեքստում կարևոր տեղ էր զբաղեցնում նաև կովկասցի իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում ջիհադի գաղափարների, իրականացվող պայքարի և մուսուլմաններ-«անհավատներ» հարաբերության վերաբերյալ քննարկումները, որտեղ զգացվեցին մուսուլմանական աշխարհում հայտնի իսլամական արմատական գաղափարախոսներ Սաիդ Կուտբի, Հասան Ալ-Բաննայի, Այման Ալ-Զաուահիրիի, Ուսամա բեն Լադենի և այլոց գաղափարների ազդեցությունը: Բացի դա, 1990-ական թթ. կեսերից Կովկասյան տարածաշրջանում ակտիվ գործում և իրենց գաղափարներն էին քարոզում իսլամական արմատականության այնպիսի գաղափարախոսներ, ինչպիսիք էին Ֆաթի ալ-Շիշանին, Աբու Ումար ալ-Սայֆը, Աբու Հաֆս ալ-Ուրդանին, կովկասցի իսլամական ծայրահեղ արմատական գաղափարախոսներ Բագաուդին Մուհամմադը, Աբուզաղիր Մանթաևը, Անզոր Աստեմիրովը և այլք:

Այդ գաղափարական հիմնադրույթների տարածման մեթոդներից էր նաև իսլամական կրթական համակարգի ձևավորումն ու իսլամական կրոնական ճանաչված հաստատություններն ավարտած կովկասցի իսլամականների կողմից այդ գաղափար-

---

[52] **Акаев В.Х.,** Ислам в Чеченской Республике, Логос, Москва, 2008, стр. 60-71.

ների քարոզն ու դրանց առարկայական կիրարկումների փնտրտուքը, որը Կովկասում նկատվեց հատկապես 1990-ական թթ.[53]:

Իսլամական արմատականության տարածման առանձնահատկությունը Կովկասում պայմանավորված էր իշխանությունների ու մուսուլմանական համայնքի հարաբերություններով, տեղի էթնիկ բաղկացուցչի ու իսլամի պատմական փոխառնչությամբ, Չեչենիայում տեղի ունեցած իրադարձություններով, տեղացի կրոնական առաջնորդների գաղափարախոսությամբ և այլն: Կովկասում իսլամական արմատականության ու ավանդական սուֆիական իսլամի միջև տեսանելի հակասություններն ու պայքարը նպաստեցին իսլամական ծայրահեղ արմատականության ակտիվացմանը, որը նկատվեց նաև երիտասարդների շրջանում:

Իսլամի ակունքներին վերադառնալու գաղափարների շուրջ հնարավոր եղավ համախմբել հասարակության տարբեր շերտերի: Այդ գաղափարները գրավիչ էին, քանզի նաև արդար սոցիալական կառուցվածքի մոդել էր ենթադրում վերոհիշյալ հասարակական շերտերի համար, որոնք այդ գաղափարների մեջ տեսնում էին մարգինալ հասարակական կարգավիճակից ազատվելու, առավել պաշտպանվածության և պահանջվածության տարրեր:

Այս գաղափարների ջատագովների շրջանում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում երիտասարդները, որոնք, ծնված լինելով 1970-ական թթ. սկզբում և 1980-ական թթ. կեսերին, կտրված էին անցյալի, խորհրդային քաղաքական և մշակութային իրողություններից: Հիշյալ իրողություններն ավագ սերնդի անցյալի

[53] **Добаев И. П.,** векторы развития современной идеологической доктрины радикальных исламистов в мире и на северном кавказе, Государственное и муниципальное управление. Ученые записки СКАГС, 2012, стр. 111-119.

պատմության և հիշողությունների մի մաս էր երիտասարդների համար, որն անմիջապես չէր անդրադառնում երիտասարդ սերնդի սեփական զգացմունքների ու ընկալումների վրա:

Երիտասարդ սերնդի համար իսլամական արմատականությունն ու արմատական գաղափարները վերածվում էին հասարակության լայն շրջանակների կողմից ճանաչողության հասնելու միջոցի: Բացի դա, իսլամական արմատականությունը առաջարկում էր սոցիալական կապերի բոլորովին այլ շրջանակ. հասարակական հարաբերությունների կառուցման ավանդական կլանային փոխհարաբերություններում ավանդական իսլամի ծիսակարգային, ինչ որ տեղ «հոգնեցուցիչ» պարտավորությունների և նկատելի մրցակցային իրողությունների փոխարեն իսլամական արմատական գաղափարախոսությունը տալիս էր հասարակական-քաղաքական ակտիվության իրագործման նոր հնարավորություններ:

Կովկասյան տարածաշրջանում, մասնավորապես Դաղստանում և Չեչնիայում ակտիվ գործում էին «Իսլամական վերածնունդ», «Ջամաա», «Իսլամական ուղի» և իսլամական արմատական գաղափարախոսությամբ առաջնորդվող այլ կառույցներ[54]: Այդ ժամանակ Դաղստանի Կարամախի, Չաբանմախի, Չանկուրբե և Կադար բնակավայրերը վերածվել էին իսլամական ծայրահեղականության յուրահատուկ կենտրոնների: 1990-ական թթ. Չեչնիայում սկսված իրադարձությունները, որոնք այնուհետև վերածվեցին չեչենական պատերազմների, սկսվեցին ԽՍՀՄ փլուզմանը և ներքաղաքական բարդ զարգացումներին զուգահեռ: 1994-1995 թթ. սկսվեցին առաջին չեչենական, իսկ 1999 թ.՝ երկրորդ չեչենական պատերազմները, որոնց ընթացքում իսլամա-

---

[54] Տե՛ս **Текушев И., Шевченко К.,** Ислам на Северном Кавказе: История и Современность, Прага, Medium Orient, 2011, стр. 20-40.

կան արմատականությունն ակտիվ դերակատարում ունեցավ: Բացի տեղի իսլամականներից, ակտիվ էին նաև այլ երկրներից եկած իսլամականները: Վերջիններից աչքի ընկան հորդանանցի Ֆաթհ Մուհամեդ Հաբիբը (Աբու Սայյաֆ) և սաուդցի Սամիր Ալ-Սուվայլիմը (Խատաբ): Աբու Սայյաֆը, որն ուներ աֆղանական պատերազմի մասնակցության փորձ, 1992 թ. ժամանեց Չեչնիա, որտեղ բացեց իսլամական դպրոց և սկսեց իրականացնել որոշակի գործունեություն: 1995 թ. Չեչնիա ժամանեց նաև Խատաբը, որի հետ՝ նաև մեծ թվով իսլամականներ: Նրանք հետագայում ակտիվ մասնակցեցին Չեչնիայի ջիհադական պայքարին: Խատաբն ու չեչեն դաշտային հրամանատար Շամիլ Բասաևը սկսեցին աշխատել օտարերկրյա մարտիկներին չեչենական ջիհադին մասնակից դարձնելու հնարավորությունների ստեղծման ուղղությամբ:



*Խատաբ (Սամիր Սալիհ ալ-Սուայլիմ. սպանվել է Ռուսաստանի Չեչնիայում 2002 թ. մարտի 20-ին) և Շամիլ Բասաև (Աբու Իդրիս. սպանվել է Ռուսաստանի Ինգուշեթիայում 2006 թ. հուլիսի 10-ին)*

Այլ երկրներից Կովկասյան տարածաշրջանում հավաքվող իսլամականների ջիհադին մասնակցելու դրդումը պայմանավորված էր

Բացի Ռուսաստանից, որը գիտակցում էր Հյուսիսկովկասյան տարածաշրջանի կարևորությունը երկրի տարածքային ամբողջականության պահպանման տեսանկյունից, այս տարածաշրջանում այդ ժամանակ ակտիվ քաղաքական խաղացողներ էին նաև ԱՄՆ-ն, Թուրքիան, Իրանը, Սաուդյան Արաբիան և այլն, որոնք իրենց աշխարհաքաղաքական նպատակներն էին հետապնդում՝ ֆինանսավորելով և աջակցելով կրոնական զանազան կառույցներ և ծրագրեր[55]:

1992 թ.՝ Ջախար Դուդաևի իշխանության տարիներին, Չեչնիայում արդեն գործում էին զանազան իսլամական կազմակերպություններ, այդ թվում՝ «Մուսուլման եղբայրներ», «Ալ-Ջամաա ալ-Իսլամիա» և այլն: Արդեն այդ ժամանակ կոչեր էին հնչում ջիհադական պայքարի և Չեչնիայի անկախության մասին[56]:

Չնայած որոշ հետազոտողներ չեչենական խնդրին տալիս էին կրոնական բնույթ, այնուամենայնիվ սկզբնական շրջանում այն բնորոշվում էր առավելապես Մոսկվայից Ջախար Դուդաևի վարչակարգի անջատողական ձգտումներով: Չեչենական առաջին պատերազմի ընթացքում ջիհադի գաղափարական արտացոլումներ չէին նկատվում, իսկ անջատողական իշխանություն-

---

[55] Այդ առումով հետաքրքիր է սիրիացի լրագրող և քաղաքագետ Բասիլ Հաջ Ջասիմի պնդումներն առ այն, որ գրեթե բոլոր դեպքերում արաբները, որոնք հայտարարել էին Կովկասում ընթացող գործընթացներին մասնակցելու մասին, աջակցություն չէին ստանում իրենց կառավարություններից: Նրանց մեծ մասն իրենց հայրենիքներում մեղադրվել էր ահաբեկչական գործունեություն ծավալելու մեջ: Այնպես որ բարդ է ասել, թե արաբական երկրները աջակցում են իսլամական ծայրահեղ արմատականությանը Հյուսիսային Կովկասում (տե՛ս Басель Хадж Джасем о взаимосвязях арабского мира и Кавказа http://www.caucasustimes.com/article.asp?id=20701 2011, 4 января.):

[56] Տե՛ս Голос ЧИ, Справедливость, 1991, январь.

ների գաղափարական հենքը ավելի շատ աշխարհիկ բնույթ ուներ[57]:

1996-1999 թթ. ընթացքում Չեչնիայում ձևավորվեցին իսլամական կարգեր, իսկ երկիրը կանգնեց քաղաքական, տնտեսական և հասարակական լուրջ ճգնաժամի առաջ[58]: 1997 թ. Չեչնիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններում Ասլան Մասխադովի հաղթանակը, ինչպես նաև Չեչնիայի կիսանկախ կարգավիճակը չէին կարող գոհացնել իսլամականներին, որոնք սկսեցին անկախ քաղաքականություն վարել երկրում[59]՝ մերթընդմերթ հարձակումներ իրականացնելով Ռուսաստանի տարբեր բնակավայրերի, ռազմական օբյեկտների վրա:

Չեչնիայի ներքաղաքական գործընթացներում, ազդեցիկ դարձած իսլամական ծայրահեղ արմատականության դեմ Մասխադովը փորձեց օգտագործել Հյուսիսային Կովկասի համար ավանդական իսլամի սուֆիական միաբանությունները, քանզի իսլամական ծայրահեղականության տարածման և մուսուլմանական աշխարհի տարբեր հատվածներից Չեչնիա եկած իսլամական ծայրահեղ արմատական աստվածաբան-հոգևորական-

---

[57] Տե՛ս **Cook D.,** Understanding Jihad, University of California Press, 2005, p. 349.

[58] Տե՛ս **Арабаджян А. З.,** Относительно так называемой неотделимости ислама от политики (Концепция и практика), Ислам и Политика (взаимодействие ислама и политики в странах Ближнего и Среднего Востока, на Кавказе и в Центральной Азии) Российская академия наук, институт Востоковедения, Москва, 2001, стр. 143-153.

[59] Այսպես օրինակ, Բասաևի, Խատաբի, Ուդուգովի և այլոց ղեկավարությամբ Չեչնիայում կազմակերպվեց Իչկերիայի և Դաղստանի ժողովուրդների կոնգրես, որի ծրագրում նշված էր Չեչնիայում և Դաղստանում Իսլամական միասնական պետություն հիմնելու նպատակը: Բացի դա, 1999 թ. սկզբում Բասաևի կողմնակիցները ստիպեցին նախագահ Ասլան Մասխադովին Չեչնիայում մտցնել ամբողջական շարիաթական ղեկավարում և այլն (Տե՛ս **Акаев В.Х.,** Ислам в Чеченской республике, Москва, 2008, стр. 61-64.):

ների ակտիվ քարոզի դեմ անհրաժեշտ էր հիմնվել ավանդական իսլամի (սուֆիական) հետևորդների աջակցության վրա:[60]

Ինչևէ՝ իսլամական ծայրահեղ արմատականության դեմ Ասլան Մասխադովի քաղաքականությունն իր դրական արդյունքները չտվեց: Գնալով Չեչնիայում էլ ավելի տարածում էին գտել մարդկանց ահաբեկման, առևանգման, սպանությունների դեպքերը, որոնք հաճախակի կիրառվում էին ծայրահեղականների կողմից: Մինչև 2000 թ. գարունը ռուսական զորքերը կարողացան իրենց վերահսկողության տակ վերցնել Չեչնիայի գրեթե ողջ տարածքը, իսկ 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ նկատմամբ իրականացված աննախադեպ ահաբեկչական բռնարարքից հետո իսլամական ծայրահեղականության դեմ ստեղծված համընդհանուր բացասական տրամադրությունները պաշտոնական Մոսկվային Չեչնիայում լայնածավալ ռազմական գործողություններ սկսելու հնարավորություն տվեցին: Ռուսաստանը միացավ միջազգային ահաբեկչության դեմ պայքարին՝ պնդելով, որ միջազգային ահաբեկչության դեմ նույնանման պայքար է իրականացվում նաև Չեչնիայում[61]:

Պետք է փաստել, որ Ռուսաստանը Չեչնիան հնազանդեցրեց, սակայն ռազմական գործողությունների միջոցով իսլամական ծայրահեղական դրսևորումներն ամբողջապես արմատախիլ անել չհաջողվեց: Կովկասյան տարածաշրջանում իսլամական ծայրահեղ արմատականության գաղափարական կենտրոն դարձավ Դաղստանը, այնուհետև՝ Չեչնիան[62]: Ստեղծվեցին իսլամական զանազան կառույցներ, մասնավորապես աչքի էր ընկնում

---

[60] Տե՛ս **Акаев В.Х.,** Суфизм и Ваххабизм на Северном Кавказе, Москва, 1999, стр. 16-18.

[61] Տե՛ս **Piontkovsky A.,** Putin’s blind alley in Chechnya, Washington Post, 30 March, 2004.

[62] Տե՛ս **Гаджиев Р.Г.,** Ваххабитский фактор в Кавказской геополитике, Грозный, 2004. стр. 121.

«Կովկասյան ճակատը», որը ներառում էր «Դաղստանյան հատվածը» («Ջամաա Շարիան» ու «Դերբենտի ջամաա»), «Ինգուշեթական հատվածը» («Ջամաա Գալգայչո»), «Կաբարդինա-Բալկարիայի հատվածը» («Կաբարդինա-Բալկարիայի ջամաա»), «Ստավրոպոլի հատվածը» (այսպես կոչված «Նագոյսկի գումարտակը»), «Կարաչայ-Չերքեզիայի հատվածը» («Կարաչայի ջամաա»): «Կովկասյան ճակատի» ստեղծման մասին հայտարարեց Իչկերիայի նախագահ Աբդուլհալիմ Սադուլաևը: 2006 թ. «Կովկասյան ճակատի» հրամանատար հռչակվեց ինգուշ Ալի Թազիևը, ով հայտնի էր նաև Ահմադ Եվլոև անունով:

Սադուլաևի մահից հետո (2006 թ. հունիս) իսլամական ծայրահեղականության տարածման ջատագովներից Չեչնիայում աչքի ընկավ Դոկու Ումարովը, ով 2006 թ. հունիսի 23-ին հայտարարեց, որ նպատակ է դրել Կովկասի «բռնազավթման» դեմ ստեղծել մի քանի ճակատներ: 2007 թ. հոկտեմբերին Ումարովը հայտարարեց Կովկասյան տարածաշրջանում «Կովկասի էմիրություն» («Իմարաթ Կավկազ») կառույցի ստեղծման մասին, որը 2000-ական թթ. չեչենական ազգայնական դիմակայությունը վերափոխեց իսլամական ծայրահեղ արմատական դրսևորման ձևի[63]:

[63] США рассматривают Северный Кавказ в лупу, Доклада Института стратегических исследований Военного колледжа армии США, глава 4, https://web.archive-.org/web/20140109170236/http://kavpolit.com/severnyj-kavkaz-segodnya.



*Դոկու Ումարով (Աբու Ուսման. սպանվել է 2013 թ. սեպտեմբերի 7-ին Դաղստանում)*

2008 թ. հուլիսին «Կովկասի Էմիրության» տեղեկատվության ծառայության ղեկավար Մովլադի Ուդուգովը տեղեկություն տարածեց, որ հայտարարված պետությունը («Կովկասի Էմիրությունը») զուրկ է սահմաններից, և սխալ է խոսել այն մասին, որ հյուսիսկովկասյան մի քանի հանրապետություններում նպատակ է դրված ստեղծել ինչ-որ կղզյակ: Հիշյալ տարածքների և Ռուսաստանի տարբեր տարածաշրջանների շատ մուսուլմաններ հավատարմության երդում են տալիս Դոկու Ումարովին՝ որպես մուսուլմանների օրինական առաջնորդի[64]: Այդ ժամանակահատվածից արդեն արձանագրվեց իսլամական ծայրահեղ արմատական տրամադրությունների աճ Կովկասում, նկատվեցին հակառուսական պայքարի նոր կարգախոսներ: Առաջին պլան

[64] Prague Watchdog, Мы взяли в руки оружие, чтобы установить законы (интервью с Мовлади Удуговым, ч. 2) //http://www.watchdog.cz/?show=000000-000015-000006-000042&lang=2 .

մղվեցին իսլամական պետություն ստեղծելու նպատակները (որի սահմանները կարող են և չսահմանափակվել միայն Հյուսիսային Կովկասով) և համընդհանուր ջիհադին մասնակցելու մտադրությունները (որի թիրախում էր ոչ միայն Ռուսաստանը, այլ նաև ԱՄՆ-ն, Եվրոպան, Մերձավոր Արևելքը և այլն):

Միևնույն ժամանակ «Կովկասի էմիրության» կողմնակիցները սկսեցին իրենց անվանել մուջահիդներ, որոնք պայքարում էին անհավատների և հավատուրացների, այդ թվում Կովկասում առկա էթնիկ-ազգայնական դրսևորումների դեմ[65]:

Հիշյալ ժամանակահատվածում կովկասյան իսլամականների շարքերում կարելի էր տեսնել ինչպես կրոնական կրթությունից զուրկ, միայն ռազմական ուժին տիրապետող իսլամականների, այնպես էլ իսլամական հեղինակավոր կրոնական հաստատություններն ավարտած, կրոնական պատշաճ կրթական բազա ունեցող աստվածաբանների, որոնք կարողանում էին զուգորդել կրոնական քարոզն ու ռազմական գործը:

Ռուսական կենտրոնական իշխանությունների դեմ «Կովկասի էմիրության» որդեգրած մարտավարությունը ժամանակ առ ժամանակ փոխվում էր՝ մերթ ռազմական ակտիվ գործողությունների, այնուհետև բավական պասիվ, գաղտնի գործողությունների տեսքով: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ էմիրության տարբեր ճյուղավորումներ հազվադեպ էին գործում իրենց ազդեցության տարածքներից դուրս: Իհարկե փորձեր արվեցին Կովկասից դուրս ընդլայնել ջիհադական պայքարի թատերաբեմը, սակայն այդ տարիներին կառույցում ահաբեկչական մարտավարության փոփոխություն մեծ հաշվով չնկատվեց՝ սահմանափակվելով միայն Ռուսաստանի տարածքում իրականացվող ահաբեկչական հարձակումներով:

---

[65] Տե՛ս **Smirnov A.,** Is the Caucasian Emirate a Threat to the Western World?, http://www.jamestown.org/single/?no_cache=1&tx_ttnews%5Btt_news%5D=45 96.

2007-2013 թթ. ընթացքում «Կովկասի էմիրությունը» ստանձնեց Ռուսաստանի տարբեր հատվածներում իրականացված մի քանի հնչեղ ահաբեկչությունների պատասխանատվությունը: 2010-2011 թթ. ընթացքում իր ուղերձներում Դոկու Ումարովը հայտարարեց, որ Ռուսաստանի բնակչությունը աջակցում է Կրեմլի քաղաքականությանը և այդ պատճառով պետք է թիրախավորվի իսլամականների կողմից: Սակայն, 2012 թ. փետրվարին Դոկու Ումարովն արգելեց Ռուսաստանի տարածքում քաղաքացիական օբյեկտների դեմ հարձակումներ իրականացնել: Սակայն 2013 թ. հուլիսին նա հայտարարեց, որ անհրաժեշտ է ակտիվացնել ընդհատակը 2014 թ. փետրվարին Սոչիում կայանալիք ձմեռային օլիմպիական խաղերի անցկացումը խափանելու համար: Կովկասում իր հետևորդներին հասցեագրված ուղերձում Դոկու Ումարովը հայտարարեց, որ հանվում է Ռուսաստանի տարածքում քաղաքացիական օբյեկտների դեմ հարձակումներ իրականացնելու արգելքը և ունի անհրաժեշտ ռեսուրսներ և հնարավորություններ ահաբեկչություններն ու հարձակումները շարունակելու համար[66]:

Դոկու Ումարովի ուղերձն ազդեցություն ունեցավ հետևորդների շրջանում ինչպես Կովկասում, այնպես էլ դրանից դուրս: Դրա առարկայական դրսևորումներին ականատես եղանք 2013 թ. ապրիլին ԱՄՆ-ում և տարեվերջին Ռուսաստանում:

2013 թ. ապրիլին ԱՄՆ Բոստոն քաղաքում մարաթոնյան վազքի ժամանակ իրականացվեցին պայթյուններ, որոնք իրականացրեցին Թամերլան և Ջոխար Ցարնաև եղբայրները[67]: Վերջին-

---

[66] Տե՛ս **Маркедонов С. М.,** Северный Кавказ. На пороге XXI века: Факторы Нестабильности, Прага Medium Orient, 2015, стр. 43-51.

[67] Պայթյուններն անմիջապես որակվեցին որպես ահաբեկչական գործողություններ, որոնք աննախադեպ էին ԱՄՆ-ի համար 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո: Պայթյունների զոհ դարձան 3 հոգի, մոտ 180 մարդ ստացավ տարբեր աստիճանի վնասվածքներ: ԱՄՆ իրավապահ մարմիններն անմիջապես հայ-

ներս ի զորու չէին միայնակ իրականացնելու նման պայթյուննե-րը. նրանք ուղղորդվել են որևէ այլ ուժի կողմից:

Շատ հնարավոր է, որ Ցարնաև եղբայրները որոշակի ցու-ցումներ են ստացել և պատրաստություն են անցել Ռուսաստանի հյուսիսկովկասյան տարածաշրջանում և որոշել առաջնորդվել հենց Կովկասյան տարածաշրջանից, մասնավորապես Դոկու Ումարովի հրահանգներով[68]: Երկու եղբայրներին ճանաչողների պնդմամբ՝ ԱՄՆ-ում բնակության ժամանակ նրանց վարքում բացահայտ արմատական իսլամական տրամադրություն չի նկատվել. նրանք զբաղվել են ուսումով և սպորտով: Թամերլանը ունեցել էր ընտանիք: Այսինքն՝ նրանք եղել են սովորական քաղաքացիներ, որոնք ոչ մի արմատական իսլամական գա-ղափարներով աչքի չեն ընկել:

Վտանգն այն էր, որ ծայրահեղ իսլամական գաղափարները, բավական արագ ներթափանցելով արևմտյան զարգացած երկրների մուսուլմանական, հատկապես երիտասարդության շերտերի մեջ, տոգորում են նրանց, որոնք մի կողմ են դնում արևմտյան արժեհամակարգում ունեցած ձեռքբերումները և դառնում ջիհադական պայքարի մարտիկներ (ըստ տեղեկութ-յունների՝ Թամերլան Ցարնաևը հաջողություններ ուներ բռնցքա-մարտում և նույնիսկ երազում էր հանդես գալ ԱՄՆ դրոշի տակ,

---

տարարեցին պայթյուններն իրականացրած կասկածյալների՝ ծագումով չեչեն 26-ամյա Թամերլան Ցարնաևի և նրա եղբայր, 19-ամյա Ջոխար Ցարնաևի անունները: Եղբայրներից Թամերլանը սպանվեց փոխհրաձգության ժամանակ, իսկ Ջոխարը ձերբակալվեց պայթյուններից 5 օր հետո՝ ապրիլի 19-ին:

[68] Հայտնի է, որ եղբայրներից ավագը՝ Թամերլան Ցարնաևը, 2003 թ. եղել է Թուրքիայում, իսկ 2012-ին՝ այցելել է Ռուսաստան, մասնավորապես Դաղստան: ԱՄՆ վերադառնալուց հետո Ցարնաևը հարցաքննվել էր ամերիկ-յան իրավապահ մարմինների կողմից, սակայն ոչինչ չէին կարողացել հայտ-նաբերել:

իսկ Ջոխարը նպատակ ուներ ուսումից հետո վերադառնալ Չեչնիա և աշխատել այնտեղ):

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ գործ ունենք հետևյալ վտանգավոր միտումների հետ. իսլամական ծայրահեղ արմատականությունը կարողանում է Արևմուտքում իր համար որսալ երիտասարդների, որոնք արդեն ինտեգրված են արևմտյան հասարակություններում, ապրում են նրանց օրենքներով, սակայն անհնար չէ այդ երիտասարդներին դարձնել ջիհադի մարտիկներ, կազմակերպել ահաբեկչական գործողություններ, «անհավատների» (քրիստոնյաների և այլն) սպանություններ, իրականացնել պայթյուններ մարդաշատ վայրերում և այլն: Նման գաղափարների զոհ են դառնում մեծ մասամբ երիտասարդները, որոնք կյանքի ծաղկուն շրջանում վերածվում են ջիհադականների՝ իրենց առջև դնելով բոլորովին այլ նպատակներ (պայթյունների կազմակերպիչներից մեկը՝ Թամերլան Ցառնաևը, իր թվիթերյան էջում մի գրառում էր զետեղել, որ չի կարողանում հասկանալ ամերիկացիներին): ԱՄՆ-ում մեծացած անձանց, որոնք ընտրել են ջիհադական պայքարի ուղին, շատ դժվար է հայտնաբերել, չեզոքացնել կամ պատասխանատվության ենթարկել: Նրանք մինչև ահաբեկչական գործողությունները մնում են աննկատ և ոչնչով չեն տարբերվում մյուս քաղաքացիներից: Հիշյալը շատ լավ պատկերացնում են իսլամական ծայրահեղ արմատական գաղափարախոսներն ու առաջնորդները, որոնք կարողանում են իրենց ուղերձների հասցեատերերին ճիշտ գտնել և հասնել իրենց նպատակների իրականացմանը:

2013 թ. ահաբեկչություններ գրանցվեցին նաև Ռուսաստանում: 2013 թ. դեկտեմբերի 27-ին և 29-ին Պյատիգորսկ և Վոլգո-

գրադ քաղաքներում տեղի ունեցան ահաբեկչական գործողություններ[69]:

2014 թ. հունվարի 18-ին իսլամական կայքէջերում տարածվեց «Անսար ալ-Սուննա» իսլամական ծայրահեղական խմբավորման հայտարարությունը, որից անմիջապես հետո տարածվեց Սուլեյման և Աբդուրահման անուններով ներկայացած ջիհադականների տեսանյութը, որտեղ իսլամականներն իրենց վրա են վերցնում 2013 թ. դեկտեմբերի 29-ին և 30-ին Ռուսաստանի Վոլգոգրադ քաղաքում ահաբեկչական բռնարարքների պատասխանատվությունը: «Անսար ալ-Սուննա» իսլամական ծայրահեղական խմբավորման հայտարարության մեջ նշվեց, որ Ռուսաստանում բռնարարքները Դոկու Ումարովի հրամանով որոշ ժամանակով դադարել էին, սակայն այժմ այդ որոշումը վերանայվել է: Ռուսաստանը պետք է դուրս բերի զինված ուժերը կովկասյան տարածքներից, հակառակ դեպքում կվերսկսվեն ահաբեկչական հարձակումներն ու բռնարարքները Ռուսաստանի տարածքում:

Բավական ուշագրավ էր Վոլգոգրադ քաղաքում ահաբեկչական բռնարարքների պատասխանատվությունը ստանձնած ջիհադականների տեսագրությունը, որում այն իրականացրած իսլամականների խոստովանության ժամանակ ետին պլանում սիրիական հակամարտության թերևս ամենահայտնի իսլամական ծայրահեղական՝ «Իրաքում և Շամում իսլամական պետության» (ԻՇԻՊ) խմբավորման դրոշի առկայությունն էր: Ըստ որոշ տեղեկությունների՝ «Անսար ալ-Սուննա» կովկասյան իսլամա-

---

[69] 2013 թ. դեկտեմբերի 27-ին Ռուսաստանի Պյատիգորսկ քաղաքում մեքենայի մեջ տեղադրված ռումբի պայթյունի հետևանքով 3 հոգի զոհվեցին: Դրանից անմիջապես հետո երկու ահաբեկչական պայթյուններ իրականացվեցին Ռուսաստանի մեկ այլ՝ Վոլգոգրադ քաղաքում, որտեղ զոհերի թիվն անհամեմատ ավելի մեծ էր՝ 34 սպանված, հարյուրավոր վիրավորներ:

կան ծայրահեղական խմբավորումն այդ շրջափուլում արդեն ակտիվ գործունեություն էր ծավալում ոչ միայն Ռուսաստանի հարավային շրջաններում, այլ ներգրավված էր մերձավորարևել-յան տարածաշրջանում իրականացվող ջիհադական պայքա-րում՝ հարելով այստեղ ակտիվություն ցուցաբերող իսլամական ծայրահեղական ուժերին՝ հատկապես այդ ժամանակ դեռևս «ալ-Կաիդա»-ի ճյուղավորում ԻՇԻՊ-ին: Վերջինիս դրոշի առկայու-թյունը Վոլգոգրադի ահաբեկչությունն իրականացրած իսլամա-կանների տեսանյութում փաստեց կովկասյան իսլամական ծայ-րահեղական որոշ ուժերի «ալ-Կաիդա»-ին հարելու և ջիհադա-կան պայքարի համընդհանուր մարտավարությանը հավատա-րիմ մնալու մասին:



***Մի խումբ կովկասցի իսլամականներ սպառնում են Ռուսաստանին***

2013 թ. վերջում տեղեկություններ տարածվեցին «Կովկասի էմիրության» առաջնորդ Դոկու Ումարովի սպանության մասին[70]: 2014 թ. հունվարի 16-ին Չեչնիայի նախագահ Ռամզան Կադիրովը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ «Կովկասի էմիրություն» իսլամական ծայրահեղական խմբավորման առաջնորդ Դոկու Ումարովն իրավապահ մարմինների կողմից իրականացված հատուկ գործողություններից հավանաբար սպանվել է, ինչը մեծ աղմուկ առաջացրեց ԶԼՄ-ներում:

2014 թ. հունվարի 16-ին մի ձայնագրություն հայտնվեց համացանցում[71], որտեղ «Կովկասի էմիրության» կադի (արաբերենից թարգմանաբար նշանակում է դատավոր) Աբու Մուհամմադը հայտնում էր, որ էմիրի (Դոկու Ումարովի) մասին ցավալի լուր է ստացել[72]:

Այդ ձայնագրությունից հետո տեղեկություններ տարածվեցին, որ հենց Աբու Մուհամմադը ընտրվել է «Կովկասի էմիրու-

---

[70] Պետք է փաստել, որ Ումարովի մահվան մասին բազմիցս հայտարարություններ էին եղել նաև նախկինում, որոնց հետևում էին հենց Դոկու Ումարովի՝ իսլամական կայքէջերում տարածած հայտարարությունները՝ ժխտելով այդ տեղեկությունները, սակայն այդ անգամ, կարծես, Ումարովի հայտարարությունն ուշացավ (հետագայում տարածված տեղեկությունների համաձայն՝ Դոկու Ումարովը սպանվել է Դաղստանում 2013 թ. սեպտեմբերի 7-ին):

[71] 2013 թ. դեկտեմբերի սկզբին Սիրիայում սպանված իսլամականներից մեկի մոտ հայտնաբերվել էր ձայնագրություն, որը հասցեագրված էր Թուրքիայում գտնվող «Կովկասի էմիրություն» խմբավորման ներկայացուցիչ Աբդուլ Ազիզին (ըստ որոշ տեղեկությունների՝ Աբդուլ Ազիզը Թուրքիայից վերահսկում է Սիրիայում և այլ վայրերում կռվող կովկասցի իսլամականներին տրվող ֆինանսական ներհոսքերը): Ձայնագրության մեջ դաղստանցի Աբու Մուհամմադը Աբդուլ Ազիզին խոստովանում է, որ Դոկու Ումարովը սպանվել է, և «Կովկասի էմիրության» ղեկավար օղակի առաջ ծառացել է էմիրի ընտրության հարցը՝ առաջարկելով ոմն չեչեն Արսլանբեկի թեկնածությունը:

[72] Кавказский Узел, Боевики Северного Кавказа предварительно подтвердили сведения о гибели Докку Умарова, 17 января, 2014 г., http://www.kavkaz-uzel.eu/articles/236785/.

թյան» նոր էմիր[73], որով և հաստատվեց Դոկու Ումարովի սպանվելու փաստը:



*Ալի Աբու Մուհամմադ (Ալիխակ Կեբեկով. սպանվել է Ռուսաստանի Բույնակսկում 2015 թ. ապրիլի 19-ին)*

Ումարովի ղեկավարման տարիներին Կովկասում նկատվող իսլամական ծայրահեղ արմատական տրամադրությունները, ճիշտ է, ճնշվում էին, սակայն ժամանակ առ ժամանակ հիշեցնում էին իրենց մասին թե՛ Կովկասում և Ռուսաստանում ահաբեկչություններով, թե՛ այլ տարածաշրջաններում իրականացվող ջիհադում կովկասցի իսլամականների ակտիվ ներգրավվածությամբ:

Այնուամենայնիվ, Կովկասյան տարածաշրջանում իսլամական ծայրահեղ արմատական տիրույթում Դոկու Ումարովի

[73] Տե՛ս նույն տեղում, Боевики Северного Кавказа окончательно подтвердили смерть Умарова и избрали нового лидера, 18 января, 2014 г., http://www.kavkaz-uzel.eu/articles/239676/.

սպանությունից հետո նկատվեցին փոփոխություններ: Ուսումնասիրելով կովկասյան տիրույթում ակտիվություն ցուցաբերող տեղեկատվական ռեսուրսներն ու իսլամականների գրառումները՝ պետք է նշել, որ նկատվեցին որոշ մեղմ մոտեցումներ «Կովկասի էմիրության» մարտավարական գործողությունների մեջ, ինչը փաստեց, որ Ումարովի մահից հետո էմիրության դիրքերը Կովկասում որոշ չափով անկում է ապրում: Ի հայտ եկան իսլամականներ, որոնք կողմնակից չէին քաղաքացիական թիրախների մարտավարությանը: Անգամ «Կովկասի էմիրության» նոր էմիր Աբու Մուհամմադը իր ուղերձներում կոչ էր հնչեցնում կենտրոնանալ ուժային կառույցների և դրանց ներկայացուցիչների դեմ հարձակումների իրականացման վրա, այլ ոչ թե ահաբեկչություններ անել քաղաքացիական օբյեկտների դեմ[74]:

2012-2013 թթ. Կովկասյան տարածաշրջանում իսլամականների մարտավարական նոր մոտեցումները պայմանավորված չէին միայն ռուսական կենտրոնական և մարզային իշխանությունների հակաահաբեկչական պայքարով և ուժային կոշտ միջոցների կիրառմամբ: Մերձավորարևելյան զարգացումները կովկասցի իսլամականների դրսևորման այլ հնարավորություններ տվեցին: Նրանք սկսեցին փնտրել ջիհադական պայքարի այլ տիրույթներ, որոնք դարձան Սիրիան, այնուհետև նաև՝ Իրաքը:

[74] Տե՛ս նույն տեղում, Лидер "Имарата Кавказ" призвал боевиков отказаться от самоподрывов и терактов против мирного населения, 1 июля, 2014 г., http://www.kavkaz-uzel.eu/articles/245134/.

## 2.2. Կովկասցի իսլամականների ներգրավումը մերձավորարևելյան զարգացումներին

2010 թ. վերջից սկսված՝ «Արաբական գարունը» և դրանով պայմանավորված հեղափոխական գործընթացները նպաստեցին իսլամական ծայրահեղականության ակտիվությանը մուսուլմանական աշխարհում, այդ թվում Կովկասի մուսուլմանների շրջանում: Այդ համատեքստում իսլամական ծայրահեղականության մեջ ի հայտ եկած նոր իրողությունները նպաստեցին կովկասյան տարածաշրջանի իսլամական արմատականության ակտիվությանը: 2011-2017 թթ. Սիրիայում և Իրաքում տեղ գտան նոր զարգացումներ, որոնցից ամենանշանակալիցը «Իսլամական պետության» հռչակումն էր:

2011-2012 թթ. ընթացքում Կովկասյան տարածաշրջանում նկատելի էին իսլամի արմատական գաղափարների խորացման ու սուննի ծայրահեղ արմատականների պայքարի առարկայական դրսևորումների փորձեր: Դրան զուգահեռ կովկասցիները սկսեցին ուղևորվել Սիրիա: Նրանք տեղափոխվում էին Մերձավորարևելյան տարածաշրջան՝ մաս կազմելու այնտեղ ընթացող ջիհադական պայքարին ոչ միայն կրոնագաղափարական համոզմունքներով դրդված, այլև գումար վաստակելու համար: Ռուսաստանի հյուսիսկովկասյան շրջաններում անվտանգության լուրջ միջոցառումները իսլամականներին մղում էին դեպի հարավ՝ ավելի «անպաշտպան» ջիհադական ճակատներ, որոնցից էր նաև Սիրիան: Թուրքիային սահմանակից լինելը նույնպես նպաստում էր կովկասյան իսլամական ներուժի կողմից թուրքական տարածքներում

ստեղծված ռազմական ճամբարներն օգտագործելու և դեպի Սիրիա ու աշխարհի այլ հատվածներ տանող տարանցիկ ուղիները սեփական նպատակներին ծառայեցնելու համար:

Սիրիայում և Իրաքում ընթացող պայքարը կովկասցի իսլամականներին աչքի ընկնելու լավ հնարավորություն տվեց, քանզի նրանք չեչենական պատերազմներից հետո ռազմական լայնածավալ գործողությունների չէին մասնակցել և սահմանափակվել էին տեղային հարձակումներ և ահաբեկչական բռնարարքներ իրականացնելով: Այս ամենը հնարավորություն ընձեռեցին նոր սերնդի կովկասցի ջիհադականներին մարտական առաջին մկրտությունը ստանալու Սիրիայում և Իրաքում՝ իրենց փորձառությունը հետագայում պատերազմի այլ ճակատներում, հատկապես Կովկասում գործի դնելու համար:

Մերձավոր Արևելքի հակամարտություններում աչքի ընկած կովկասցի ջիհադականների գործողություններում նկատվեցին ուղղորդումներ, որոնք ծառայեցվում էին ինչ-ինչ խնդիրներ լուծելու համար: Նման մոտեցումներով էր առաջնորդվում Թուրքիան, որն ակնառու դարձավ 2014 թ. գարնանը Սիրիայի Լաթակիա նահանգում ծավալված իրադարձություններում: Քեսաբի և հարակից հայկական գյուղերի վրա 2014 թ. մարտի 21-ին սիրիական ընդդիմադիր խմբավորումների, մասնավորապես իսլամական արմատական խմբավորումների հարձակումն ի հայտ բերեց թուրքական իշխանությունների նպատակները Սիրիայի այս հատվածում: Հարձակվողների շրջանում մեծ թիվ էին կազմում նաև Կովկասը ներկայացնող ջիհադականները: Ընդդիմադիր զորաջակատները (այդ թվում իսլամական խմբավորումները) Թուրքիայի կողմից անարգել հատելով սահմանը (ընդ որում հենց անմիջապես սահմանային անցակետը)՝ հարձակվեցին հայաբնակ Քեսաբի և շրջակա գյուղերի վրա: Իսլամականների գրոհը ստացավ նաև Թուրքիայի սահմանամերձ հատվածում տեղա-

կայված թուրքական զորամիավորումների անմիջական աջակցությունը, որոնք կրակ բացելով Սիրիայի տարածքում տեղակայված սիրիական ուժերի, ինչպես նաև իսլամականների դիքերը հրթիռակոծող սիրիական ռազմաօդային ուժերին պատկանող ինքնաթիռի վրա, ապահովեցին իսլամականների անվտանգ ներխուժումը սիրիական տարածք:

Թուրքական իշխանությունների կողմից կովկասցի ջիհադականներով համալրված իսլամական խմբավորումների ուղղորդման մասին էին խոսում նաև այդ խմբավորումները ղեկավարող մի շարք առանցքային կովկասցի իսլամականների Թուրքիայում լինելու և սիրիա-թուրքական սահմանամերձ շրջաններում ռազմական ճամբարներ ունենալու փաստերը[75]: Վերոշարադրյալի համատեքստում Սիրիայում հիմնականում թյուրքերով (թուրքեր, ադրբեջանցիներ, թաթարներ և այլն) և չեչեններով համալրված իսլամական ծայրահեղական խմբավորումների թվաքանակի ավելացում նկատվեց հատկապես Հալեպի և Իդլիբի սիրիական նահանգներում և հյուսիսային այլ շրջաններում, որոնց ռազմական, ֆինանսական և այլ բնույթի օժանդակությամբ զբաղվող Թուրքիան իրեն հարող սիրիական տարածքների վերաբերյալ ուներ սեփական ծրագրերը[76]:

---

[75] Մասնավորապես, չեչեն առաջնորդներից (դաշտային հրամանատարներից) Սայֆուլլահ աշ-Շիշանին երկար ժամանակ ապրել է Թուրքիայում, որտեղից տեղափոխվել է Սիրիա (տե՛ս Islamist North Caucasus Rebels Training a New Generation of Fighters in Syria, The Jamestown foundation, Terrorism Monitor, Volume, 12 Issue 3, February 7, 2014, http://www.jamestown.org/single/?tx_ttnews%5Bpointer%5D=3&tx_ttnews%5Btt_news%5D=41927&tx_ttnews%5BbackPid%5D=228&cHash=3736d9357ce52140d1d6f985402a80c3#.VCglNGeSySo.) Մեկ այլ գործիչ Մուրադ Մարգոշվիլին, որ ղեկավարում է Սիրիայում «Ջունուդ աշ-Շամ» խմբավորումը, Թուրքիայի թողտվության պայմաններում թուրք-սիրիական սահմանի մոտ սիրիական հատվածում ուներ սեփական ռազմական ճամբարը (տե՛ս U.S. Department of State, Designations of Foreign Terrorist Fighters, September 24, 2014 (http://www.state.gov/r/pa/prs/ps/2014/09/232067.htm.) և այլն:

[76] 2015 թ. սկզբից, երբ վերոհիշյալ սիրիական շրջաններում ընդդիմադիր-

Կովկասցի իսլամականները աչքի ընկան ոչ միայն որպես շարքային զինյալներ, այլ նաև որպես զանազան խմբավորումներ ղեկավարող հմուտ հրամանատարներ և հեղինակավոր առաջնորդներ, որոնց փորձն օգտագործվեց Սիրիայի և Իրաքի տարբեր հատվածներում իրականացվող ջիհադում: Նրանցից հայտնի են Աբու Ումար աշ-Շիշանին (Թարխան Բաթիրաշվիլի, սպանվել է 2016 թ. հունիսին: Նրա մասին խոսվում է մենագրության երրորդ գլխում), Սայֆուլլահ աշ-Շիշանին (սպանվել է 2016 թ. փետրվարի 6-ին Հալեպի մոտ), Մուսլիմ ալ-Շիշանին (Ամիր Մուսլիմ), «Կովկասի էմիրությունը» ներկայացնող Սալահ ադ-Դին աշ-Շիշանին և այլք:



*Սայֆուլլահ աշ-Շիշանին. (սպանվել է Սիրիայի Հալեպ քաղաքի մոտ 2016 թ. փետրվարի 6-ին)*

---

ները լայնամասշտաբ ռազմական հարձակման անցան մի քանի ուղղություններով՝ հարձակվելով Իդլիբ քաղաքի և հարակից բնակավայրերի վրա: 2015 թ. մարտի վերջին Իդլիբ քաղաքը և դեպի արևմուտք ընկած մի քանի բնակավայրեր անցան ընդդիմադիրների վերահսկողության տակ:





*Մուսլիմ ալ-Շիշանին (Ամիր Մուսլիմ)*



*Շամիլ Բասաև և Մուսլիմ ալ-Շիշանի*



*Մուսլիմ ալ-Շիշանին Սիրիայի Լաթակիա նահանգի հյուսիսում՝ հայաբնակ Քեսաբի մոտ տեղի ունեցած մարտերից մեկի ժամանակ*





*«Կովկասի էմիրությունը» ներկայացնող Սալահ ադ-Դին ալ-Շիշանի*





*Մուսլիմ ալ-Շիշանին (ձախից), Սալահ ադ-Դին ալ-Շիշանին (կենտրոնում) և «Աջնադ ալ-Կաուկազ» խմբավորման էմիր Աբդ ալ-Հաքիմ ալ-Շիշանին (աջից)*

Սիրիայում տեղի ունեցող ջիհադական պայքարում ակտիվորեն ներքաշված են կովկասցիներով համալրված այնպիսի խմբավորումներ, ինչպիսիք են՝ «Կովկասի էմիրության» ճյուղավորումը, «Ջայշ ալ-Մուհաջիրին ուա ալ-Անսար», «Սիրիայում Կովկասի էմիրություն», «Ջայշ ալ-Ուսրա», «Աջնադ ալ-Կաուկազ» խմբավորումները և առանձին գործող կամ իսլամական ծայրահեղ արմատական այլ խմբավորումների շարքերում ներգրավված կառույցները: Կովկասցի իսլամականներով համալրված կառույցների ջիհադական պայքարի տարածքը ընդգրկում է հիմնականում Սիրիայի Լաթակիա, Իդլիբ, Հալեպ և ալ-Ռակկա նահանգները: Նկատվել են կովկասցի իսլամականների ակտիվություն «Իսլամական պետության» շարքերում Սիրիայի այլ հատվածներում ևս:

## 2.3. «Կովկասի վիլայեթի» հռչակումն ու ստեղծված իրավիճակը Կովկասյան տարածաշրջանում

Իսլամական արմատական ներուժն ուղղորդելու և կովկասցիների հոսքը դեպի Սիրիա վերահսկելու փորձեր էին անում նաև հենց կովկասցի ծայրահեղ իսլամական առաջնորդները՝ կոչ անելով վերադառնալ Կովկաս և այստեղ կյանքի կոչել ջիհադական պայքարը, և սա տալիս էր իր արդյունքը: Ռազմական պատրաստություն և լայնածավալ ռազմական գործողությունների փորձ ձեռք բերած կովկասցի իսլամականները ունակ էին ջիհադական պայքար մղելու կովկասյան և այլ տարածաշրջաններում:

2013-2014 թթ. Սիրիայում նկատվեցին հակասություններ իսլամական ծայրահեղ արմատական կառույցների՝ առաջին հերթին «ալ-Կաիդա»-ի և «Իրաքում և Շամում իսլամական պետության» միջև: Պառակտումներ նկատվեցին նաև կովկասյան իսլամականների շրջանում: Այդ հակասություններն էլ ավելի ցայտուն դրսևորվեցին 2014 թ. կեսերից, որոնք պայմանավորված էին առաջին հերթին նոր իրողություններով, մասնավորապես Սիրիայում և Իրաքում տեղ գտած գործընթացներով: Ստեղծված նոր իրողությունների պայմաններում Մերձավոր Արևելքում աստիճանաբար ակտիվացած իսլամական ծայրահեղ արմատականության ուշադրությունից չվրիպեց նաև Կովկասը: Խնդիրն այն էր, որ «Իսլամական պետության»[77] ռազմավարական մոտեցում-

[77] 2014 թ. հունիսի 29-ին «Իրաքում և Շամում իսլամական պետություն» իս-

ներից էր իսլամական ծայրահեղական տիրույթում առաջնահերթություն ստանձնելը, ինչը ենթադրում էր մուսուլմաններով բնակեցված աշխարհի տարբեր հատվածներում հեղինակավոր և ազդեցիկ իսլամական կառույցներին հակակշռելը: Իսկ քանի որ Կովկասը դիտարկվում էր «ալ-Կաիդա»-ի տիրույթում, ապա «Իսլամական պետության» նպատակներից էր նաև հաստատվել այդ տարածաշրջանում:

Ասվածի համատեքստում Կովկասում նույնպես սրվեցին հակասությունները մի կողմից «ալ-Կաիդա»-ին հարող հին սերունդը ներկայացնող իսլամականների, իսկ մյուս կողմից «Իսլամական պետությանը» հարող նոր սերնդի իսլամականների միջև: Նկատվեցին բախումներ իսլամական ծայրահեղականների, այդ թվում նաև Կովկասյան տարածաշրջանը ներկայացնող ջիհադականների շրջանում: Բացի դա, նկատվեցին «Իսլամական պետության» նոր խալիֆ Աբու Բաքր ալ-Բաղդադիին ուղղված հավատարմության երդումներ Կովկասում գործող իսլամական խմբավորումների առաջնորդների կողմից[78]: 2015 թ. ամռանն Ալ-Բաղդադին ընդունեց հավատարմության այդ երդումը, և Կովկասյան տարածաշրջանում հայտարարվեց «Իսլամական պետության» կազմի մեջ մտնող նոր տարածքի՝ «Կովկասի վիլայեթի» ստեղծման մասին[79]: Նույն հայտարարության մեջ «Իսլամական պե-

---

լամական ծայրահեղ արմատական կառույցը, որը մինչ այդ Սիրիայում հարում էր «ալ-Կաիդա»-ին, վերանվանվեց «Իսլամական պետություն»՝ վերահսկելով Սիրիայի ու Իրաքի զգալի հատվածն ու այդտեղ հռչակելով իսլամական խալիֆայություն:

[78] 2015 թ. ամռանը համացանցում ձայնագրություն տարածվեց, որտեղ «Դաղստանի», «Իչկերիայի», «Ինգուշեթիայի», «Կաբարդինա-Բալկարիայի» և «Կարաչայի» վիլայեթների զինյալները հավատարմության երդում էին տալիս «Իսլամական պետության» խալիֆ Աբու Բաքր ալ-Բաղդադիին (Кавказский Узел, ИГ объявило о присяге всех боевиков Северного Кавказа аль Багдади, 23 июня, 2015 г., http://www.test.kavkaz-uzel.ru/articles/264409/):

[79] Kurdistan.ru, **Григорян С.,**”Вилаят Кавказ”-34-ый вилаят “Исламского госу-

տության» ղեկավար շրջանակը Աբու Մուհամմադ Ալ-Կադարիին նշանակեց վիլայեթի էմիր[80]:



***«Կովկասի վիլայեթի» էմիր Աբու Մուհամմադ ալ-Կադարի (Ռուստամ Ասիլդերով. սպանվել է Դաղստանում 2016 թ. դեկտեմբերի 3-ին ռուսական իրավապահ մարմինների կողմից իրականացված հակաահաբեկչական գործողությունների ընթացքում)***

дарства”, 07 декабря, 2015 г., http://kurdistan.ru/2015/07/12/articles-24478_Vilayat_-Kavkaz_-_34-yy_vilayat_Islamskogo_gosudarstva.html

[80] Այդ մասին հայտարարություն տարածեց «Իսլամական պետության» առաջնորդներից Աբու Մուհամմադ Ալ-Ադնանին (ալ-Ադնանին սպանվել է 2016 թ. օգոստոսի 30-ին ամերիկյան օդուժի ավիահարվածից Սիրիայի ալ-Բաբ քաղաքի մոտ) 2015 թ. հունիսի 23-ին (տե՛ս Pieter Van Ostaen wordpress, Audio Statement by Shaykh Abu Muhammad al-‘Adnani as-Shami, June 23, 2015, https://pietervanostaeyen.wordpress.com/2015/06/23/o-our-people-respond-to-the-caller-of-allah-audio-statement-by-shaykh-abu-muhammad-al-adnani-as-shami/:

«Իսլամական պետության» համացանցային ռեսուրսներում 2016 թ. հուլիսին մի տեսահոլովակ տարածվեց, որը պատմում էր, թե ինչպես է կառուցված «Իսլամական պետությունը», ինչպիսի վիլայեթներ ու կառույցներ են մտնում նրա կազմում: Ըստ այդմ՝ «Իսլամական պետության» վիլայեթների թիվը 2016 թ. հուլիսի 6-ի դրությամբ 35-ն էին: Դրանցից 19-ը գտնվում էին Իրաքում և Սիրիայում, իսկ 16-ը՝ աշխարհի մուսուլմանաբնակ այլ հատվածներում[81]:

Պետք է նշել, որ ամեն տարածք չէր կարող հայտարարվել «Իսլամական պետության» վիլայեթ: Վիլայեթի կարգավիճակ էր տրվում հատկապես այն հատվածներին, որտեղ գործող իսլամականներն ու ծայրահեղական խմբավորումները աչքի էին ընկնում ջիհադական պայքարի ակտիվությամբ:

Հատկանշական է, որ «Կովկասի վիլայեթ» ստեղծելուն զուգահեռ «Իսլամական պետությունը» ակտիվացրեց ռուսաց լեզվով քարոզչությունը: Եթե մինչ 2015 թ. կեսերը «Իսլամական պետության» հիմնական լրատվական ռեսուրսների («Դաբիկ», «ալ-Ֆուրաթ» և այլն) հրապարակած տեղեկություններում ռուսերենով տեղեկատվությունը բավական քիչ տեղ էր զբաղեցնում, ապա արդեն 2015 թ. ամռանից համացանցում սկսեց տարածվել «Իստոկ» («Исток») ռուսերեն տեղեկագիրը, որի նպատակն էր ռուսախոս ընթերցողին ներկայացնել «Իսլամական պետության» տարբեր հատվածներում և աշխարհում տեղի ունեցող գործընթացները, ռազմական գործողությունները, ջիհադական պայքարի մանրամասները, Ռուսաստանի մուսուլմանաբնակ հատվածներում քարոզչության տարածումը և այլն:

---

[81] Տե՛ս **Daftari L.**, The Foreign Desk, ISIS releases “Structure of the Caliphate,” video detailing terror group’s day-to-day operations, Jule 6, 2016, http://www.foreign-desknews.com/world/middle-east/isis-releases-structure-caliphate-video-detailing-terror-groups-day-day-operations/.

2015 թ. հունիսին Կովկասի վիլայեթի հռչակումից հետո, որը նույնպես մտնում էր «Իսլամական պետության» 35 վիլայեթների մեջ, նկատվեց ջիհադական պայքարի ակտիվացում: 2016-2017 թթ. ընթացքում բազմաթիվ ահաբեկչական հարձակումներ կատարվեցին հատկապես Ռուսաստանի հարավկովկասյան և մերձկովկասյան շրջաններում, ինչը փաստեց, որ Կովկասում իսլամական ծայրահեղ արմատականությունը թևակոխում է նոր շրջափուլ՝ ներքաշվելով ինչպես Կովկասում, այնպես էլ դրանից դուրս տեղի ունեցող իրադարձություններին: Իսլամականների ակտիվությունը Կովկասում, որը հատկապես նկատելի է իրավապահ մարմինների աշխատակիցների ու կայանատեղիների նկատմամբ ահաբեկչական հարձակումների տեսքով, խոսում է այն մասին, որ մոբիլիզացիոն ռեսուրս առկա է, սակայն առավել լայնամասշտաբ գործողությունների կովկասցի իսլամականները դեռևս պատրաստ չեն[82]: Պետք է նաև նկատել, որ Կովկասում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցները կապված են նաև տարածաշրջանից դուրս գործող նմանատիպ շրջանակների հետ, ինչը որոշակի ուղղորդումների հնարավորություններ է ստեղծում:

Ներկայում Կովկասում իսլամական ծայրահեղ արմատական կառույցների ղեկավար շրջանակում խառնաշփոթ է. նկատելի են տարաձայնություններ ոչ միայն կառույցների ռազմավարական-մարտավարական մոտեցումների, այլ նաև ղեկավար կազմի վե-

---

[82] 2017 թ. մայիսի դրությամբ «Իսլամական պետությունը» ստանձնել է Ռուսաստանում իրականացված 15 ահաբեկչական հարձակումների պատասխանատվություն: Այդ ահաբեկչական հարձակումներից 8-ն իրականացվել են Դաղստանում, 2-ը՝ Չեչնիայում, 2-ը՝ Մոսկվայի մարզում և մեկական Աստրախանի մարզում, Խաբարովսկի երկրամասում և Ինգուշեթիայում (տե՛ս **Youngman M., Cerwyun M.,** Centre for Research and Evidence on Security Threats, "Russian-Speaking" Fighters In Syria, Iraq And At Home: Consequences And Context (Full Report), November 20, 2017, pp. 15-16.):

ռաբերյալ: Հիշյալի ապացույցն է «Չեչնչայի վիլայեթի» առաջնորդ Աբու Համզայի կողմից տարածված հայտարարությունն առ այն, որ կան հակասություններ կովկասյան իսլամականների շրջանում, և պետք է խորհուրդ հրավիրել էմիր և դատավոր ընտրելու համար[83]:



*Չեչնիայի վիլայեթի առաջնորդ Աբու Համզա*

Բավական բարդ է նշել Կովկասում իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներ կրող մարդկանց թվաքանակը: Պարզ է, որ համընդհանուր հետապնդումների պայմաններում չենք կարող ունենալ իրական պատկեր: Դրան հակառակ, կան

[83] On Kavkaz, **Меренкова Л.,** "Имарат Кавказ" сегодня: Кто амир северокавказских радикалов, чем они занимаются и где живут?, 18 июля, 2017 г., https://onkavkaz.com/articles/4112-imarat-kavkaz-segodnja-kto-amir-severokavkazskih-radikalov-chem-oni-zanimayutsja-i-gde-zhivut.html.

բազմաթիվ տեղեկություններ Մերձավոր Արևելքում ընթացող ջիհադին Կովկասից մասնակցող իսլամականների թվաքանակի վերաբերյալ: Այսպես օրինակ, 2015 թ. տարածված որոշ տեղեկությունների համաձայն՝ Հյուսիսկովկասյան տարածաշրջանը ներկայացնող 1000-ից ավելի զինյալներ արդեն պայքարում էին Սիրիայում և Իրաքում[84]: Ըստ Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության տնօրեն Ալեքսանդր Բորտնիկովի 2015 թ. փետրվարին հայտնած տեղեկության՝ Սիրիայում և Իրաքում կռվում էին ՌԴ մոտ 1700 քաղաքացիներ, որոնց թիվը վերջին տարվա ընթացքում կրկնապատկվել էր[85]: 2015 թ. հոկտեմբերին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտնեց «Իսլամական պետության» կազմում Սիրիայում և Իրաքում կռվող ԱՊՀ երկրները ներկայացնող 5000-7000 իսլամականների մասին[86]: Պուտինի հիշյալ հայտարարությունից մեկ օր առաջ «Իսլամական պետության» կազմում ՌԴ քաղաքացիների թվի հետ կապված արտահայտվել էր ՌԴ ՆԳՆ փոխնախարար Ալեքսանդր Գորովոյը, ով նշել էր մոտ 2500 Ռուսաստանի քաղաքացիների մասին[87]:

Պարզ է, որ հիշյալ թվերը այնքան էլ ճիշտը լինել չեն կարող. հասկանալի է, որ ռուսաստանցի իսլամականներից ոչ բոլորն են ներկայացնում Ռուսաստանի կովկասյան շրջանները: Բացի դա, Մերձավոր Արևելքում կռվող այսպես կոչված «ռուսախոս» իսլամականներից ոչ բոլորն են տեղափոխվել (կամ տեղափոխվում)

---

[84] Տե՛ս **Kramer M.,** The Return of Islamic State Fighters, The Impact on the Caucasus and Central Asia, Harvard University, August 2015, p. 1., http://www-.ponarseurasia.org/sites/default/files/policy-memos-pdf/Pepm381_Kramer_Aug2015.pdf

[85] Newsru.com, Глава ФСБ рассказал, сколько россиян воюет на стороне экстремистов в Ираке, 20 февраля, 2015 г., http://www.newsru.com/world/20feb2015/bortnikov.html.

[86] BBC, Русская служба, Путин: в ИГ воюют от 5 до 7 тысяч выходцев из СНГ, 16 октября, 2015 г., http://www.bbc.com/russian/news/2015/10/151016_putin_cis_isis.

[87] Украинская правда, МВД России: 2,5 тысячи россиян воюют в составе ИГИЛ, 15 октября, 2015 г., http://www.pravda.com.ua/rus/news/2015/10/15/7084995/.

հիշյալ տարածաշրջան հենց Կովկասից: Հայտնի են դեպքեր, երբ Սիրիայում և Իրաքում ընթացող ջիհադին մասնակցել են չեչեն փախստականներ Ավստրիայից, Թուրքիայից, ուսանողներ Եգիպտոսից և այլն[88]: Փաստ է, Սիրիայում և Իրաքում իսլամական ծայրահեղ արմատական տարբեր կառույցներում ներքաշված են մեծ թվով կովկասցի իսլամականներ, ինչը բավական մտահոգիչ է ոչ միայն Ռուսաստանի համար:

[88] **Youngman M., Cerwyun M.,** Centre for Research and Evidence on Security Threats, “Russian-Speaking” Fighters In Syria, Iraq And At Home: Consequences And Context (Full Report), November 20, 2017, pp. 6-7.

## 2.4. Իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների կառուցվածքային առանձնահատկությունները Կովկասում («Կովկասի Էմիրության» օրինակով)

Կովկասում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցի առանձնահատկությունը նրա շղթայական կառուցվածքն է, մոդելը, որի յուրաքանչյուր հատված ինքնաբավ է և խարսխված է կովկասյան հանրույթում հասարակական-մշակութային ու քաղաքական ինտեգրման վրա:

«Կովկասի Էմիրության» գաղափարական հենքը իսլամական ծայրահեղ արմատականությունն է, որի կառուցվածքը ոչնչով չի տարբերվում մերձավորարևելյան համանման կառույցներից (ինչպիսին օրինակ՝ «ալ-Կաիդա»-ն է): Նմանությունը հենց նրանց ցանցային բնույթն է, որի մեջ ներգրավված կառուցվածքային միավորը ջամաան է (արաբերենից թարգմանաբար նշանակում է հանրույթ, խումբ, մասնաճյուղ): Ջամաաթները համախմբված են մեկ միասնական՝ խալիֆայության ստեղծման նպատակի շուրջ այն վայրում, որտեղ դրանք գործում են: Այս կամ այն հասարակական-քաղաքական համակարգի ինստիտուտներում իսլամական ծայրահեղ արմատական կառույցի ինտեգրվածության մակարդակից էլ կախված է վերոհիշյալ նպատակի կենսունակությունը: «Կովկասի Էմիրության» կազմի մեջ մտնող ջամաաթները միավորված են այն կառույցների մեջ, որոնք կոչվում են հատվածներ (sectors): Հատվածներն ընդգրկված են վիլայեթների մեջ, որոնք էլ կազմում են «Կովկասի Էմիրությունը»: Խոշոր հատվածները կարող են կազմված լինել 4-6 ջամաաթներից: Յուրա-

քանչյուր ջամաայի կազմում ընդգրկված են 8-12 խուլամական: Որպես կանոն, հատվածների զբաղեցրած հատվածը կրկնում է վարչատարածքային միավորների աշխարհագրական տարածքը (օրինակ՝ Կաբարդինա-Բալկարիայի հարավարևմտյան հատվածը կրկնում է Չեգեմի շրջանի վարչական սահմանները):

Կովկասի պայմաններում հաճախ էթնիկ խմբերը բնակվում են հոծ խմբերով (օրինակ՝ Կաբարդինա-Բալկարիայի Բակսանի շրջանի Բակսան քաղաքն ու հարող բնակավայրերը բնակեցված են առավելապես կաբարդիններով): Այնպես որ կարելի է պնդել, որ վերոհիշյալ ջամաաթները էթնիկ առումով միատարր են: Ջամաաթների էթնիկական միատարրությունը պայմանավորված է նաև Կովկասի այս կամ այն հատվածում նկատվող հասարակական-քաղաքական իրավիճակի փոփոխությամբ:

Ներկայում Կովկասում տեսանելի են արմատական գաղափարախոսության և տեղական հասարակական-քաղաքական համակարգերի զուգակցման փորձեր, որը թույլ է տալիս կարծիք կազմել հյուսիսկովկասյան ընդհատակում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների զարգացման և իսլամական յուրահատուկ էթնիկ-դավանական արմատական մոդելի ձևավորման մասին:

Եթե նախկինում (1990-ական թթ.) գործ ունեինք համակարգված գործողություններից և միասնական ֆինանսական աղբյուրից զուրկ ջամաաթների հետ, որոնք ռազմական խմբավորումներ էին և առաջնորդվում էին խմբավորման կազմում ներգրավված էթնիկ խմբերի խախտված իրավունքների վերականգնմամբ կամ ավանդական իսլամական կառույցների հետ ունեցած դավանական հակասություններով, ապա այժմ մենք գործ ունենք ցանցային կառույցի հետ, որն ունի իր ինստիտուտները՝ դատական իշխանություն (կադիներ), հարկային համակարգ և գործա-

դիր իշխանություն՝ ի դեմս տարբեր մակարդակներում գործող էմիրների և դաշտային հրամանատարների:

Կովկասում նման կառույցների երկարակեցությունը պայմանավորված է իսլամական ծայրահեղ արմատական գաղափարախոսության և կովկասյան հասարակական ինստիտուտների զուգակցմամբ ու Կովկասում առկա հասարակական-քաղաքական իրողություններին հարմարեցմամբ:

Կովկասյան իսլամական ծայրահեղ արմատականության շարժիչ ուժը այստեղ ամուր հիմքեր ունեցող տոհմացեղային կապերն են: Իսլամական ընդհատակի ձևավորման նախնական փուլում էթնիկ բաղկացուցիչը կարևոր դեր խաղաց, քանզի այն թույլ էր տալիս օգտագործել ցեղային կապերը նոր իսլամականների հավաքագրման և ռազմգործողությունների կազմակերպման համար:

Տարածքային և տեղանքային կապը հնարավորություն տվեց արդյունավետ պայքարել դաշնային և հանրապետական ուժային կառույցների դեմ: Այն թույլ էր տալիս իսլամական կառույցներին տեղեկացված լինել տեղերում տիրող իրավիճակին, նախապես իմանալ ուժայիններից սպասվող հատուկ գործողությունների մասին, վերահսկել տեղի բիզնես միջավայրը, զբաղվել հարկահանությամբ (հարկահանությունը բարձրացնում է ինքնաֆինանսավորման հնարավորությունը, ինչը չափազանց կարևոր է ընդհատակում գործող իսլամական կառույցների համար) և այլն:

Հյուսիսկովկասյան իսլամական ծայրահեղ արմատական կառույցներն ունեն երեք հիմնական բաղկացուցիչ՝

*Առաջին.* դա այն օղակն է, որը բաղկացած է ռազմական գործողություններին անմիջապես մասնակցող իսլամականներից: Վերջիններս հիմնականում գտնվում են հետախուզման մեջ և հետապնդվում են իրավապահ մարմինների կողմից: Այդ օղակի մեջ մտնող իսլամականները անցնում են ընդհատակ, ներքաշ-

ված են ռազմական ակտիվ գործողությունների մեջ և առանձին տեսագրություններով դիմում են համախոհներին՝ դուրս գալ ջիհադական պայքարի:

*Երկրորդ*. իսլամականների հարազատներն ու համագյուղացիներն են, որոնք զբաղված են առաջին շղթայի մեջ մտնող իսլամականներին տեղեկատվություն, սննդամթերք և վարձու թաքստարաններ տրամադրելով:

*Երրորդ* բաղկացուցիչը ամենամարդաշատն է: Դրանում ընդգրկված են մարդիկ, որոնք համախոհ են և կիսում են առաջին շղթայի մեջ մտնող իսլամականների գաղափարները, սակայն ուղղակիորեն կապված չեն նրանց հետ: Երրորդ բաղկացուցչի հիմնական զանգվածը երիտասարդ մուսուլմաններն են, որոնք հետևում են իսլամական ավանդույթներին և հաճախում են մզկիթներ: Հենց այս շղթան է առաջին շղթան նոր իսլամականներով համալրելու աղբյուր ծառայում [89]:

[89] Տե՛ս **Текушев И.,** Имарат Кавказ как модель, Северный Кавказ на Пороге XXI Века: Факторы Нестабильности, Прага, Medium Orient, 2015, стр. 75-91.

# ԳԼՈՒԽ III

# ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

## 3.1. Իսլամական արմատականությունն Ադրբեջանում

Կովկասում աճող իսլամական արմատական տրամադրությունները չէին կարող չնպաստել մուսուլմանական Ադրբեջանում իսլամի արմատական գաղափարների տարածմանը, որը հատկապես նկատվեց Ադրբեջանի անկախացումից հետո, երբ իսլամի շիայական, սուննիական (նաև արմատական), սուֆիական ուղղությունները (նակշբանդիա, կադիրիա և այլն), ինչպես նաև թուրքամետ իսլամական ուղղությունները (նուրսիզմ, գյուլենականություն և այլն), ստանալով աջակցություն մուսուլմանական մի շարք արտաքին ուժային կենտրոններից, զանազան մարդասիրական ու բարեգործական ծրագրերի քողի տակ հաստատվեցին և շատ դեպքերում խոր արմատներ ձգեցին այս երկրում[90]։

1990-ական թթ. իսլամական գաղափարների տարածմանը զուգընթաց մեծամասամբ շիադավան Ադրբեջանում ավելանում էին նաև սուննի իսլամական արմատական, այդ թվում նաև ծայ-

---

[90] Տե՛ս **Юнусов А.,** Исламская Палитра Азербайджана, Баку, 2012, стр. 7-10, http://www.kavkazoved.info/images/myfls/files/au-full.pdf.

 րահեղ արմատական տրամադրությունները: Ադրբեջանցի իսլամականները ակտիվորեն ներքաշվեցին ոչ միայն Կովկասում տեղի ունեցող հակամարտություններում (Ղարաբաղյան հակամարտություն, Չեչենական պատերազմներ), այլև այլ տարածաշրջաններում ընթացող ջիհադին (Աֆղանստան, Պակիստան, Աֆրիկա և այլն)[91]: Այս առումով պետք է նշել, որ 1988-1994 թթ. Ղարաբաղյան հակամարտության ժամանակ Ադրբեջանի կողմից մարտնչում էին նաև աֆղանական պատերազմով անցած բազմաթիվ ջիհադականներ[92], որոնց մի մասը Ադրբեջանից հետագայում տեղափոխվեց Չեչնիա՝ զինված գործողություններին մասնակցելու համար, իսկ մյուս մասը մնաց Ադրբեջանում՝ ակտիվ դերակատարում ստանձնելով երկրում արմատական շարժումների կայացման գործում[93]:

1990-ական թթ. կեսերին նկատվեց Ադրբեջանում գործող իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող ջիհադականների (ինչպես ադրբեջանցի, այնպես էլ օտարերկրյա) ակտիվ ներգրավվածություն Կովկասում ընթացող գործընթացների մեջ[94]: 1990-ական թթ. կեսերին Չեչնիայում

---

[91] Jihadology.net, **Zelin A.,** The Clear Banner: The Forgotten Fighters: Azerbaijani Foreign Fighters in Syria and Iraq, February 2, 2015, http://jihadology.net/2015/02/02-/the-clear-banner-azerbaijani-foreign-fighters-in-2014/, տե՛ս նաև **Youngman M., Cerwyun M.,** նշվ. աշխ., էջեր 18-19:

[92] 1990-ական թթ. սկզբին Ադրբեջանը արցախյան պատերազմում դիմեց մուջահիդների օգնությանը, և այդ կոչն անարձագանք չմնաց: Քաբուլից Բաքու ուղիղ չվերթներով Ադրբեջանում էին հայտնվում, այնուհետև արցախյան ճակատ էին փոխադրվում հարյուրավոր մուջահիդներ (այդ թվում Խատաբը, Շամիլ Բասաևը և այլք) ջիհադական պայքարին մասնակցելու համար (Տե՛ս **Шерматова С.,** Террористы секонд-хэнд, // Московские новости, 2001, 20 сентября):

[93] Տե՛ս **Charalampidis I.,** Sponsored to Kill, Mercenaries and Terrorist Networks in Azerbaijan, M., 2013, pp. 20-21 (http://karabakhfacts.com/wp-content/uploads/2013/-02/Ioannis-Charalampidis-Sponsored-to-Kill-ENG.pdf).

[94] Հատկանշական է ԱՄՆ պետքարտուղարության 1999 թ. հրապարակած զեկույցը, որտեղ Ադրբեջանը բնորոշվում էր որպես ահաբեկչական խմբավո-

և Դաղստանում Խատաբի և այլ իսլամական ծայրահեղ արմատական լիդերների ճամբարներում ռազմական պատրաստություն են անցել նաև մեծ թվով ադրբեջանցի իսլամականներ[95]:

Հիշյալ ժամանակահատվածում, Ադրբեջանում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցները մասնակցություն ունեցան նաև Կովկասից դուրս իրականացված այնպիսի հնչեղություն ստացած ահաբեկչական գործողություններին, ինչպիսիք էին 1996 թ. Քենիայում և Տանզանիայում ամերիկյան դեսպանատների պայթեցումները և այլն[96]: Այդ համատեքստում պարզ է դառնում, որ մուսուլմանական աշխարհի որոշ հատվածներում ակտիվ գործող իսլամական արմատական կազմակերպությունները (օրինակ՝ «Իսլամական ջիհադ», «ալ-Կաիդա» և այլն) Ադրբեջանում արդեն ունեին վաղուց գործող իրենց բջիջները:

Ադրբեջանում գործող իսլամական արմատական կառույցները օգտվել են նաև «Միջազգային մարդասիրական հիմնադրամից», «Հիմնական օգնության հիմնադրամից» և այլ հիմնադրամ-

---

րումների և հարող իսլամական ծայրահեղականների թիկունքային աջակցության կոնտրոն (Տե՛ս Гос. Деп. США, Модели глобального терроризма, 1999; Зеркало, 01/04/02):

[95] Տե՛ս **Youngman M., Cerwyun M.,** նշվ. աշխ., էջեր 24-25:

[96] Քենիայում և Տանզանիայում ԱՄՆ դեսպանատների դեմ իրականացված ահաբեկչական գործողությունների հետաքննության արդյունքում բացահայտվել է, որ «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Ուսամա բեն Լադենը Աֆղանստանից դեպի Բաքու մոտ 60 հեռախոսազանգ է կատարել: Նայրոբիի ահաբեկչական հարձակումից մեկ ժամ առաջ Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից դեպի Լոնդոն «ալ-Կաիդա»-ի կողմից հիշյալ ահաբեկչության պատասխանատվության ստանձնումը հաստատող արաբերեն ուղերձ է հղվել (տե՛ս **Yunusov A**., Islam in Azerbaijan, Institute for Peace and Democracy, Baku, Azerbaijan, 2004, pp. 245-247), նաև տե՛ս **Demoyan H**., The Islamic Mercenaries in the Karabakh War, The Way International Terrorist Networks Penetrated Azerbaijan, Yerevan 2004, pp. 5-17, http://www.karabakhcenter.com/images/menus/315/the_islamic.pdf):

ներից տրվող ֆինանսական աջակցությունից: Հիշյալ հիմնադրամներն իրենց ներկայացուցչություններն ունեին նաև Բաքվում[97]: 1990-ական թթ. վերջում Բաքվում գործող որոշ «մարդասիրական» կառույցներ, որոնք ղեկավարվում էին սաուդցի և եմենցի կամավորների կողմից, օգտվում էին Մերձավոր Արևելքից եկող ֆինանսական հոսքերից: Ադրբեջանում և Վրաստանում գործող հիշյալ «մարդասիրական» կառույցների դրամական միջոցներից օգտվել են նաև հայտնի իսլամական առաջնորդները (Խատաբ, Աբու Ումար ալ-Սայֆ և այլն) Կովկասում (մասնավորապես Չեչնիայում) իրենց ռազմաբազաների ֆինանսավորման համար[98]:

2001 թ. դրությամբ Ադրբեջանի իշխանություններին որոշ չափով հաջողվեց միջազգային իսլամական կառույցներին հիմնականում դուրս մղել հասարակական-քաղաքական դաշ- տից: Սակայն իսլամական արմատական գաղափարները, այդ թվում՝ իսլամական ծայրահեղ արմատական դրսևորումներն Ադրբեջանում շարունակեցին գոյություն ունենալ[99]:

Ադրբեջանում սուննիական իսլամական արմատականության դեմ բռնաճնշումների ու իշխանությունների կողմից շարունակաբար իրականացվող հետապնդումների պատճառով այդ խմբավորումները գործել են ընդհատակում՝ ժամանակ առ ժամանակ ակտիվություն դրսևորելով թե՛ Ադրբեջանում, թե՛ դրա սահմաններից դուրս: Ընդհատակյա գործունեությունն ու շարունակվող հետապնդումները թույլ չեն տալիս ամբողջական պատ-

---

[97] Стратегическая политика, Боданский Й., Служба Исследований Конгресса США, Oktober 9, 2001.

[98] Տե՛ս **Youngman M., Cerwyun M.,** նշվ. աշխ., էջեր 18-20:

[99] Տե՛ս **Փաշայան Ա.,** Իսլամն Ադրբեջանում. Անցյալը և ներկան, Երևան, 2014 թ., էջ 126-127:

կերացում ունենալ Ադրբեջանում իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներ կրողների թվի վերաբերյալ: Կցկտուր տեղեկությունները լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն[100]:

[100] Ադրբեջանում սուննի իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող ադրբեջանցիների թիվը տարբեր գնահատականներով տատանվում է 10.000-20.000-ի միջև (Տե՛ս Institute for War and Peace, Azerbaijan: Sunni Groups Viewed With Suspicion, Report, 8 April 2011. Available, http://www-.unhcr.org/refworld/docid/4da3f66a2c.html. In 2008, International Crisis Group estimated 10,000 as a likely maximum in Azerbaijan.):

## 3.2. Ադրբեջանում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցները

Իշխանության կողմից բռնաճնշումների հետևանքով ընդհատակում շարունակում են գործել իսլամական ծայրահեղ արմատական տրամադրություններով առաջնորդվող մի շարք կառույցներ: Դրանցից առավել աչքի են ընկնում հետևյալները.

*«Ալ-Ջիհադ»* - 1995 թ. Ադրբեջանում ստեղծված առաջին իսլամական ծայրահեղ արմատական կառույցներից էր, որի հիմնադիրը եգիպտացի Իբրահիմ Այդարուսին էր: 1990-ական թթ. երկրորդ կեսից «ալ-Ջիհադ»-ը որդեգրեց ահաբեկչական գործելաոճ՝ հարելով «ալ-Կաիդա»-ին[101]:

[101] 1998 թ. Քենիայում և Տանզանիայում ամերիկյան դեսպանատների պայթեցումից մեկ ժամ հետո Բաքվից Լոնդոն հեռախոսային ֆաքսով ուղերձ է ուղարկվել, որտեղ «ալ-Կաիդա»-ն պատասխանատվություն էր ստանձնում հիշյալ բռնարարքների համար (տե՛ս **Корнелл С.,** Политизация ислама в Азербайджане, Институт Центральной Азии-Кавказа и Программа исследований Великого шелкового пути, Вашингтон и Упсала, 2006 г., стр. 48.): Բացի դա, այդ ահաբեկչական գործողությունների հետաքննությամբ բացահայտվել է, որ «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Ուսամա բեն Լադենը Աֆղանստանից Բաքու մոտ 60 հեռախոսազանգ է կատարել: Նայրոբիի ահաբեկչական հարձակումից մեկ ժամ առաջ Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից դեպի Լոնդոն «ալ-Կաիդա»-ի կողմից հիշյալ ահաբեկչության պատասխանատվության ստանձնումը հաստատող արաբերեն ուղերձ է հղվել (տե՛ս **Yunusov A.,** Islam in Azerbaijan, Institute for Peace and Democracy, Baku, Azerbaijan, 2004, pp. 245-247), նաև տե՛ս **Demoyan H.,** The Islamic Mercenaries in the Karabakh War, The Way International Terrorist Networks Penetrated Azerbaijan, Yerevan 2004, pp. 5-17 (http://www.karabakhcenter.com/images/menus/315/the_islamic.pdf)

*«Հիզբ ուլ-Թահրիր»* - Կառույցի առաջին անդամները Ադրբեջան ժամանեցին 2000 թ. Հյուսիսային Կովկասից: 2001 թ. օգոստոսին Ուզբեկստանի քաղաքացի Աբդուրասուլ Աբդուքերիմովի կողմից ստեղծվեց այդ կառույցի ճյուղավորումն Ադրբեջանում: Նույն թվականին կառույցը հայտարարվեց ահաբեկչական, իսկ դրա 6 անդամները (5 ադրբեջանցի և 1 ուկրաինացի) ձերբակալվեցին Ադրբեջանի աշխարհիկ կարգերը տապալելու փորձերի և ահաբեկչություններ պլանավորելու համար[102]:

*«Անտառային եղբայրներ»* - Ստեղծվել է Դաղստանի հարավում: 2007-2008 թթ. «Անտառային եղբայրներ» խմբավորումը ղեկավարեց ադրբեջանցի Իլգար Մոլաչիևը[103], ով Խատաբի, Շամիլ Բասաևի և մի շարք այլ իսլամականների ղեկավարությամբ ակտիվորեն մասնակցել է չեչենական պատերազմներին: Իլգար Մոլաչիևը ակտիվացրեց կառույցի գործունեությունը նաև Ադրբեջանում (առևանգումներ, փրկագների պահանջ, զինված հարձակում Բաքվի Աբու Բաքր մզկիթի վրա և այլն)[104]: 2012 թ. ապրիլին ադրբեջանական ուժային կառույցների կողմից հակաահաբեկչական գործողություններ իրականացվեցին Բաքու, Գյանջա, Սումգայիթ, Զաքաթալա, Քախ, Շեքի և Կուսար բնակավայրերում: Ձերբակալվեց 17 մարդ, սպանվեց «Անտառային եղբայրների» այդ ժամանակվա առաջնորդ Վուգար Պադարովը:

*«Ղարաբաղի պարտիզաններ»* - Ադրբեջանում ակտիվ գործող իսլամական խմբավորումներից է: Կառույցը համալրված է ջիհա-

---

[102] Кавказский Узел, Азербайджан: независимый ислам и государство, 16 июля 2008, http://www.kavkaz-uzel.eu/articles/139308/#s19.

[103] 2008 թ. սեպտեմբերի 7-ին Դաղստանում Մոլաչիևն ու նրա 3 զինակիցները ոչնչացվեցին իրավապահ մարմինների հետ բախման ժամանակ:

[104] Այդ տարիներին մասնաճյուղեր են ստեղծվել Ադրբեջանի տարբեր հատվածներում: Սումգայիթ քաղաքում ձևավորվեց «Սումգայիթի ջամաա»-ն, որը 2008, 2009, 2010 թթ. մի շարք զինված գործողություններ իրականացրեց Ադրբեջանում:

դական պայքարի փորձ ունեցող ադրբեջանցի իսլամականներով, որոնք մասնակցել են Աֆղանստանի և Չեչնիայի պատերազմներին, ներգրավված են եղել նաև Լեռնային Ղարաբաղում հայկական ուժերի դեմ իրականացվող ռազմական գործողություններում[105]:



Karabakh Partisans (left to right): Footage from their trial in 2004, Rovshan Badalov, and Rustem Askerov

***Ձախից՝ Բաքվում «Ղարաբաղի պարտիզաններ» խմբավորման դատավարության ժամանակ: Աջից խմբավորման առաջնորդներ Ռուստամ Ասքերովը (պանվել է Սիրիայում 2013 թ. դեկտեմբերին) և Ռովշան Բադալովը (սպանվել է Սիրիայի քրդաբնակ Քոբանիում 2014 թ. հոկտեմբերին)***

Ադրբեջանում իսլամական արմատականության տարածման գործում ակտիվ են եղել ոչ պետական զանազան «մարդասիրական» կառույցներ, որոնք ֆինանսավորվել են Ադրբեջանից դուրս

[105] «Ղարաբաղի պարտիզանների» անդամներից շատերը 2004 թ. ձերբակալվել էին ադրբեջանական իշխանությունների կողմից՝ մեղադրվելով ջիհադական պայքար ծրագրելու մեջ:

գործող հիմնադրամներից և կազմակերպություններից: Մասնավորապես Ադրբեջանում 1990-ական թթ. կեսերից գործել են «Իսլամական ժառանգության վերականգնման միությունը», սաուդյան «Օգնության բաշխման միջազգային իսլամական կազմակերպությունը» և այլն, որոնք ոչ միայն զբաղվել են մզկիթների, կրոնական ուսումնական կենտրոնների կառուցմամբ և մարդասիրական բնույթի աշխատանքներով, այլ քարոզել են իսլամական արմատական գաղափարներ[106]:

2011-2017 թթ. ադրբեջանցի իսլամականների ակտիվությունն Ադրբեջանում չնվազեց: Երկրի իրավապահ մարմինները շարունակեցին սուննիական արմատական գաղափարներով առաջնորդվող ադրբեջանցի իսլամականների հանդեպ ճնշումներն ու հետապնդումները: Ձերբակալվածների խուզարկության ժամանակ հայտնաբերվեցին ինքնաձիգներ, ատրճանակներ, նռնակներ ու այլ զինամթերք: Դա վկայում է այն մասին, որ Ադրբեջանում ակտիվ են իսլամական ծայրահեղ արմատական զանազան խմբավորումներ, որոնց ծրագրերում ներառված են նաև ահաբեկչական գործողություններ: 2014 թ. գարնանը Ադրբեջանի խորհրդարանը օրենսդրական փոփոխություններ կատարեց, որոնցով խստացվեց ահաբեկչության և վարձկանության համար նախատեսված պատիժը[107]: Սակայն միջոցառումներն առանձնապես մեծ ազդեցություն չեն ունենում արմատական գաղափարներով առաջնորդվող ադրբեջանցիներին զսպելու համար:

Ադրբեջանական ԶԼՄ-ներում ժամանակ առ ժամանակ տեղեկություններ են հայտնվել ձերբակալված ադրբեջանցի իսլա-

[106] Кавказский Узел, Азербайджан: независимый ислам и государство, 16 июля 2008, http://www.kavkaz-uzel.eu/articles/139308/#s19.

[107] Кавказский узел, **Фаик М.,** В Азербайджане ужесточены меры наказания за наемничество и терроризм, ИА, 15 марта 2014 г. http://www.kavkaz-uzel.ru/articles/239526/.

մականների մասին, որոնք մեղադրվել են Սիրիա և Իրաք տեղափոխվելու և այնտեղ «անհավատների» դեմ կռվելու մտադրություն ունենալու մեջ[108]:

Մերձավոր Արևելքից Ադրբեջան վերադարձող իսլամականների վերաբերյալ տեղեկություններ նույնպես եղել են. մի մասի նկատմամբ հարուցվել են քրեական գործեր: 2017 թ. սեպտեմբերին հրապարակված տեղեկությունների համաձայն՝ մոտ 80 ադրբեջանցիներ պատասխանատվության են ենթարկվել Սիրիայում և Իրաքում ահաբեկչական խմբավորումների շարքերում ջիհադական պայքարին մասնակցելու համար: Հավանաբար իշխանությունների կողմից պատասխանատվության է կանչվել ադրբեջանցի իսլամականների այն հատվածը, որի մուտքն ու ելքը Սիրիա (կամ Իրաք) ինչ-որ կերպ վերահսկվել ու գրանցվել է: Պարզ է, որ Մերձավոր Արևելքում ընթացող ջիհադին մասնակցած և հայրենիք վերադարձած ադրբեջանցիների մի մասը պատասխանատվության չի ենթարկվել՝ նրանցից ամեն ինչ սպասելի է[109]:

Ներկայում Ադրբեջանում իսլամական ծայրահեղ արմատական տրամադրությունների ակտիվացումը ու այդ համատեքստում Մերձավորարևելյան և Կովկասյան տարածաշրջաններում ադրբեջանցի իսլամականների ներգրավվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Ադրբեջանում իսլամական ծայրահեղ արմատականությունը խոր արմատներ ունի, որի հիմնական պատճառներից են՝

- Ադրբեջանի հասարակական-քաղաքական, տնտեսական ոլորտներում առկա խնդիրները, որոնք խորացնում են

[108] Haqqin.az, В Азербайджане обезврежена группа боевиков «Исламского государства», 2 сентября 2015 г. http://haqqin.az/news/52186.

[109] Meydan.tv, В Азербайджане арестованы 80 человек за участие на войне в Сирии и Ираке, 12 сентября, 2017г., https://www.meydan.tv/ru/site/news/25085/.

կենտրոնական իշխանությունների և հասարակության լայն շրջանակների միջև անջրպետը՝ նպաստելով հակասությունների ի հայտ գալուն:

- Ադրբեջանում սուննիադավանների աճող թվաքանակը[110], որը նպաստում է ծայրահեղական գաղափարների տարածմանը:
- 2011 թ. սկզբից մուսուլմանական երկրներում սկսված վերափոխումներն իրենց ազդեցությունն ունեցան իսլամական ծայրահեղական նոր ալիքի բարձրացման վրա մուսուլմանական աշխարհում, այդ թվում՝ Կովկասյան տարածաշրջանում և մասնավորապես Ադրբեջանում:
- 2011-2017 թթ. Սիրիայում և Իրաքում տեղ գտած զարգացումները, դրանցում ակտիվացող իսլամական ծայրահեղ արմատականությունն ու «Իսլամական պետության» հռչակումը:

[110] Ըստ պաշտոնական տվյալների՝ Ադրբեջանում շիադավանների և սուննիադավանների տոկոսային հարաբերակցությունը կազմում է համապատասխանաբար՝ 70 % և 30 % (Metbuat.az, Komitə sədri, Azərbaycanda müsəlmanların 70 faizi şiə, 30 faizi əhli-sünnədir, 28 November 2016, http://metbuat.az/news/575941/komite-sedri-azerbaycanda-muselmanlarin-70-faizi-sie-30-faiz.html), սակայն, ըստ Կովկասի մուսուլմանների վարչության առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեի՝ Ադրբեջանում շիադավանների թիվը կազմում է 65 %, իսկ սուննիադավաններինը՝ 35 % (Report.az, Аллахшукюр Пашазаде, Порядка 35% населения Азербайджана – сунниты, 65% – шииты, 14 февраля 2015 г., http://report.az/ru/religiya/allahshukyur-pashazadepredpolagaetsya-chto-v-azerbajdzhane-35-naseleniya-sunnity-a-65-shiity/):

### 3.3. Ադրբեջանական իսլամական ծայրահեղ արմատական կառույցներն ու առաջնորդները Մերձավոր Արևելքում

Ադրբեջանցի իսլամականներն իրենց ակտիվությամբ աչքի են ընկել նաև Կովկասի այլ հատվածներում, մասնավորապես Պանկիսի կիրճում (որը գտնվում է երեք պետությունների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի սահմանի հատման միջնամասում) և Վրաստանի ու Ռուսաստանի այլ տարածքներում[111]:

2001-2003 թթ. Ադրբեջանի Ազգային անվտանգության մարմինները ձերբակալել են 70 իսլամականների, որոնք փորձել են անցնել Ռուսաստանի կովկասյան տարածքներ՝ մասնակցելու այդտեղ ընթացող ջիհադին: 1999-2005 թթ. Կովկասում 33 ադրբեջանցի ջիհադական է սպանվել:

Ադրբեջանցի իսլամականներն ակտիվորեն մասնակցել են նաև Աֆղանստանում և Պակիստանում տեղի ունեցած ռազմական գործողություններին: Կան տեղեկություններ, որ հենց այդ երկրներում 200-250 ադրբեջանցիներ են ներգրավված եղել ջիհադին, որոնցից 23-ը (այդ թվում՝ մեկ մահապարտ ահաբեկիչ) սպանվել են 1999-2005 թթ.:

Ադրբեջանցիները նույնիսկ հեղինակավոր հրամանատարներ են ունեցել Կովկասի և Աֆղանստանի իսլամականների շրջանում: Մասնավորապես Ազեր Միզիրխանովը (սպանվել է 2009 թ. ամերիկյան օդուժի ավիահարվածի հետևանքով) Աֆ-

---

[111] Ru.rfi.fr, Георгий Лебанидзе, Грузия пытается бороться с влиянием ИГИЛ, 12 апреля 2015 г., http://ru.rfi.fr/kavkaz/20150412-gruziya-pytaetsya-borotsya-s-vliyaniem-igil.

դանստանում եղել է իսլամական «Տաիֆա ալ-Մանսուրա» խմբավորման հրամանատարներից մեկը[112]: Նա Ադրբեջանի Խալաֆլի բնակավայրից էր և բավական ակտիվորեն ներգրավված է եղել Կովկասում տեղի ունեցող ռազմգործողություններին: Հետաքրքիրն այն է, որ 2001 թ. նա նույնիսկ ձերբակալվեց ադրբեջանական իրավապահ մարմինների կողմից, սակայն մեկ տարի անց ազատ է արձակվել անհայտ պատճառներով[113]:




*Ազեր Միզիրխանով ձախից*

Ադրբեջանցիները շարունակում են ակտիվություն դրսևորել նաև Մերձավոր Արևելքում ընթացող ռազմական գործողություններում: Ադրբեջանում իսլամականների հավաքագրման ցանցային կայացած համակարգ է գործում, որի միջոցով ադրբեջանցի իսլամականները ֆինանսավորվում և տեղափոխվում են Մերձավոր Արևելք ջիհադին մասնակցելու համար: Ֆինասավո-

---

[112] Jihadology.net, GUEST POST: Azerbaijani Foreign Fighters in Syria, January 28, 2014, http://jihadology.net/2014/01/28/guest-post-azerbaijani-foreign-fighters-in-syria/.

[113] Jihadology.net, նույն տեղում:

րումն իրականացվում է ինչպես առանձին անհատների, այնպես էլ առանձին կառույցների ու հիմնադրամների միջոցով[114]: Նրանց տարանցիկ ճանապարհը հիմնականում անցնում է Թուրքիայի տարածքով[115]:

Մինչև 2013 թ. Մերձավոր և Միջին Արևելքում գործում էին ադրբեջանական կամ վերջինիս բաղադրիչի դոմինանտությամբ առանձին կառույցներ: Այդ ժամանակահատվածում սիրիական հակամարտությունում ներգրավված ադրբեջանցիները ընդգրկված էին հիմնականում *«Ջայշ ալ-Մուհաջիրին ուա ալ-Անսար»* խմբավորման կազմում, մասնավորապես այդ կառույցի մաս կազմող *«Ադրբեջանական ջամաա»*-ի մեջ:

Ադրբեջանցի իսլամականներով համալրված հաջորդ կառույցը *«Ջունդուլլահ»* խմբավորումն էր, որում ներգրավված էին նաև թուրքեր: Այն գործել է սիրիական ալ-Ռակկա նահանգում և ակտիվորեն մասնակցել է երկրի հյուսիսում քրդաբնակ Քոբանիի վրա հարձակումներին:

Մյուս խմբավորումը, որը համալրված էր ադրբեջանցի և թուրք ջիհադականներով, Իրաքում ջիհադական պայքար մղող *«Խատաբ»* կառույցն էր, որն այդպես էր կոչվում այդ խմբավորման առաջնորդի՝ Խատաբ ալ-Ազերիի պատվին: Որոշ ադրբեջանցիներ գործել են նաև *«Աբու Քամիլ»* խմբավորման կազմում, որը հիմնականում չեչեններով էր համալրված:

Սիրիայում ադրբեջանցի իսլամական առաջնորդներից աչքի ընկավ Աբու Յահյա ալ-Ազերին (Նիքաթ Աշուրով, սպանվեց 2013 թ. սեպտեմբերին): Նա խարիզմատիկ և հեղինակավոր առաջնորդներից էր, ով հեղինակություն էր վայելում ոչ միայն ադրբեջանցի

[114] Грузия онлаин, Россия зафиксировала перевод денег ИГИЛ из Азербайджана?, 22 ноября 2015, http://www.apsny.ge/2015/conf/1448240387.php.

[115] Voprosik.net, Вербовка террористов в Азербайджане, 31 августа, 2014, http-://voprosik.net/verbovka-terroristov-v-azerbajdzhane/.

ջիհադականների, այլև այլ իսլամական ծայրահեղ արմատական շրջանակներում: Ալ-Ազերին մի շարք ուղերձներով է հանդես եկել, որտեղ կոչ էր անում Ադրբեջանում գտնվող իր հայրենակիցնե- րին՝ տեղափոխվել Սիրիա և այլ ջիհադական ճակատներ:




*Աբու Յահյա ալ-Ազերի (Նիքաթ Աշուրով. սպանվել է Սիրիայում 2013 թ. սեպտեմբերին)*



*Սայֆուլլահ ալ-Շիշանի և Աբու Յահյա ալ-Ազերի*



*Աբու Ումար ալ-Շիշանի և Աբու Յահյա ալ-Ազերի*



*Աբու Յահյա ալ-Ազերին ադրբեջանցի խլամականների հետ Սիրիայում*



Աբու Յահյա ալ-Ազերիի սպանությունից հետո ադրբեջանական ջիհադականների ղեկավարությունը ստանձնեց Մուսաբ ալ-Ազերին (Մուսաբ Աբդ ալ-Ռահիմ Աբդ ալ-Մաջիդ), ով 12 այլ ադրբեջանցիների հետ միասին սպանվեց քրդական զինված ստորաբաժանումների կողմից 2014 թ. մարտին:




*Ադրբեջանցի իսլամականների առաջնորդ Մուսաբ ալ-Ազերի*

Մուսաբ ալ-Ազերիի մահից հետո ադրբեջանցի ջիհադականների ղեկավարությունն անցավ Մուհամմադ ալ-Ազերիին:

«Ղարաբաղի պարտիզաններ» կոչված ադրբեջանցի իսլամականները նույնպես հեղինակություն էին վայելում Սիրիայի ջիհադականների շրջանում, որոնց մեջ էին նաև սիրիական հակամարտությունում աչքի ընկած Ռուստամ Ասքերովը (սպանվեց Սիրիայում 2013 թ. դեկտեմբերին) և Ռովշան Բադալովը (սպանվեց Քոբանիում 2014 թ. հոկտեմբերին):

Մեկ այլ ադրբեջանցի՝ Ջոհրաբ Մամեդովը թուրք-ադրբեջանական խմբավորման («Ջունդուլլահ») առաջնորդն էր:

Մյուս ադրբեջանցի ազդեցիկ իսլամականը Խատաբ ալ-Ազերին էր, ով իր երիտասարդ տարիքին (մոտ 30 տարեկան) ունեցել է մեծ հեղինակություն ջիհադականների շրջանում: Նա համարվում է ադրբեջանցի իսլամական ամենահայտնի առաջնորդներից մեկը Սիրիայում և Իրաքում[116]:



***Խատաբ ալ-Ազերին (կենտրոնում) և իր առաջնորդությամբ գործող ադրբեջանցի իսլամականներով համալրված խմբավորումը գրավում են սիրիական նավթահանքերից մեկը***

[116] Jihadology.net, **Zelin A.,** The Clear Banner, The Forgotten Fighters, Azerbaijani Foreign Fighters in Syria and Iraq, February 2, 2015 (http://jihadology.net/2015/02/02/t-he-clear-banner-azerbaijani-foreign-fighters-in-2014/).

2013 թ. կեսերից իսլամականների վերահսկողության տակ անցան Սիրիայի՝ էներգակիրներով հարուստ ալ-Ռակկա և Դեր Զոր նահանգները: Այստեղից նավթի ու գազի վաճառքն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ ապահովեց իսլամականների համար, որը հնարավորություն տվեց աշխարհի տարբեր հատվածներից Սիրիայում, իսկ 2014 թ. կեսերից արդեն Իրաքում հավաքվող ջիհադական ներուժը, այդ թվում նաև ադրբեջանցի ջիհադականներին ֆինանսավորելու համար[117]:

Իսլամականների ֆինանսավորման աղբյուրներ են նաև մուսուլմանական տարբեր երկրներից փոխանցվող ֆինանսական միջոցները՝ որոշ մուսուլմանական իշխանական շրջանակներից, տարբեր երկրների մուսուլմանական համայնքներից և անհատական նվիրատվություններից և այլ ճանապարհներով հավաքվող ռեսուրսները: Ադրբեջանցի իսլամականները նույնպես ֆինանսավորվում էին այդ աղբյուրներից և հենց Ադրբեջանից ստացվող նվիրատվություններից[118]:

2013 թ. կեսերից սկսած՝ Սիրիայում և Իրաքում ներգրավված ադրբեջանցի իսլամականների շրջանում նկատվեցին փոփոխություններ. ադրբեջանցիները հիմնականում համալրեցին ամենաազդեցիկ «Իսլամական պետություն» և «Ջաբհաթ ալ-Նուսրա» (2016 թ. հուլիսի 28-ին վերջինս հայտարարեց իր լուծարման և նոր խմբավորման՝ «Ջաբհաթ Ֆաթհ ալ-Շամ»-ի ձևավորման մասին, իսկ 2017 թ. հունվարի 28-ին այս խմբավորումը վերանվանվեց՝ «Հայա Թահրիր ալ-Շամ») խմբավորումները[119], որոնց

[117] Տե՛ս **Գրիգորյան Ս.**, Իսլամական պետություն. Ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջեր՝ 173-180:

[118] Известия, Росфинмониторинг, 3,5 тыс. россиян направляли деньги террористам, 20 ноября, 2015, (http://izvestia.ru/news/596157).

[119] Իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների հեղինակավոր, ազդեցիկ և համընդհանուր բնույթը դրդել է ադրբեջանցիներին հրաժարվել

կազմում շարունակեցին մասնակցել Սիրիայում և Իրաքում տեղի ունեցող ռազմական գործողություններին:

Սիրիական և իրաքյան կառավարական ուժերի դեմ պայքարելուց զատ ադրբեջանցի իսլամականներն ակտիվ մասնակցել են տարբեր էթնիկ խմբերի դեմ իրականացված ռազմական գործողություններին[120], որոնք ևս կարելի է դիտարկել ոչ միայն Սիրիայում և Իրաքում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների, այլև տարածաշրջանային ու արտատարածաշրջանային ուժերի կողմից ուղղորդումների համատեքստում:

Մասնավորապես «Իսլամական պետության» վերազգային բնույթն ու Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս եկող նկրտումներն ընդգրկեցին նաև Ադրբեջանը, որտեղ ազդեցության տարածման փորձ արվեց այդ կառույցի կողմից[121]: Բացի այն հանգամանքից, որ Ադրբեջանում արմատներ են գցել հիշյալ կառույցները[122], վերջիններս Ադրբեջանը դիտում են նաև որպես

---

առանձին էթնիկ խմբավորումներից՝ գործելով վերոհիշյալ կառույցների դրոշի ներքո:

[120] Բազմաթիվ ադրբեջանցիներ սպանվել են Սիրիայի քրդաբնակ Քոբանիի համար տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ: Բացի դա, ավելի հավաստումը կարող ենք գտնել նաև իսլամականների կողմից տարածված որոշ փաստաթղթերում, որոնք փաստում են Սիրիայի և Իրաքի քրդաբնակ և եզդիաբնակ հատվածներում սպանված ադրբեջանցի իսլամականների մասին: Տե՛ս մենագրության 123 և 124 էջերում ներկայացված հավելվածը:

[121] Հատկանշական է, որ 2014 թ. մի շարք լրատվական ռեսուրսներում տարածվեց «Իսլամական պետության» քարտեզը, որի մեջ էր նաև Ադրբեջանը (Haqqin.az, МНБ о провокации иракских ваххабитов против Азербайджана, 13 июня 2014 г., https://haqqin.az/news/24228):

[122] Gordonua.com, В Азербайджане задержаны пятеро азербайджанцев, воевавших в Сирии на стороне ИГИЛ, 17 октября 2015, http://gordonua.com/news/worldnews/v-azerbaydzhane-zaderzhany-pyatero-azerbaydzhancev-voevavshih-v-sirii-na-storone-igil-102506.html.

տարանցիկ ուղի՝ իսլամականների համար ջիհադական պայքարն աշխարհի այլ հատվածներում շարունակելու համար[123]:

Հիշյալ զարգացումներին զուգահեռ՝ նկատվել են ադրբեջանցի իսլամականների արտահոսք հակառակ ուղղությամբ՝ «Իսլամական պետությունից» դեպի Թուրքիա, այնուհետև՝ Ադրբեջան: Դրա հետ կապված՝ առկա է հետևյալ իրողությունը. «Իսլամական պետությունը» լքում են հիմնականում ռազմական գործողություններին ակտիվություն չդրսևորողներն ու թերացողները, որոնց թվում են նաև ադրբեջանցի որոշ իսլամականներ:

Այս առումով 2016 թ. հետաքրքրական տեղեկություններ հայտնվեցին ԶԼՄ-ներում (այդ թվում նաև՝ հայկական) առ այն, որ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ ադրբեջանական զինուժի կողմից կռվել են «Իսլամական պետությունը» լքած ադրբեջանցի իսլամականներ: Մի շարք լրատվամիջոցներում շրջանառվում էր այն տեղեկությունը, որ «Իսլամական պետության» ադրբեջանցի իսլամականների մոտ 60 հոգանոց զորաջոկատը հայտնվել է ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում: Այդ մասին առաջին անգամ հիշատակվեց Հյուսիսկովկասյան տարածաշրջանը ներկայացնող իսլամականների սոցցանցերում, թե իբր ադրբեջանցի իսլամականները լքել են Սիրիայի ալ-Ռակկա քաղաքը՝ տեղափոխվելով Ղարաբաղ: Այնուհետև այդ տեղեկատվությունը հայտնվեց ռուսական և հայկական որոշ լրատվամիջոցներում[124]: Պատճառը հավանաբար շփման գծից ստացվող զարհուրելի վայրագությունների մասին տեղեկություններն էին:

---

[123] Այդ առումով հատկանշական է այն տեղեկությունը, որ «Իսլամական պետությունը» փորձում է Ադրբեջանը, Վրաստանը ու Կիպրոսը օգտագործել որպես տարանցիկ ուղիներ իր կողմնակիցներին ուղղորդելու Թուրքիայում, Ադրբեջանում և աշխարհի այլ հատվածներում ահաբեկչություններ իրականացնելու համար (Minval.az, ИГИЛ нацелилась на Азербайджан – шокирующее заявление, 7 декабря 2016, http://minval.az/news/123602599):

[124] Regnum.ru, Азербайджанский отряд ИГИЛ вернулся в Карабах, 4 апреля 20-

Այս լուրերը հավաստի չեն, քանզի՝

- Այդ մասին առաջինը կհայտնեին «Իսլամական պետությանը» հարող լրատվամիջոցները, սակայն նման տեղեկություններ բացակայել են:
- Եթե նույնիսկ «Իսլամական պետության» կազմում կռվող ադրբեջանցիների սեփական նախաձեռնությունն է եղել ղարաբաղա-ադրբեջանական շփման գիծ մեկնելը, ապա պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ Մերձավոր Արևելքում իրականացվող ջիհադում ներգրավված ադրբեջանցիների համար խնդիրը Սիրիայում և Իրաքում ստեղծված իսլամական խալիֆայության համար պայքարելն է, և այս փուլում դժվար թե նրանք թողնեին «Իսլամական պետությունը», առավել ևս, որ նման հրահանգ «Իսլամական պետության» ղեկավար շրջանակից չի եղել:

«Իսլամական պետությանը» և «Ջաբհաթ ալ-Նուսրա» իսլամական ծայրահեղ արմատական կառույցներին անդամակցելուն զուգահեռ որոշ ադրբեջանցի իսլամականներ շարունակեցին ներգրավված մնալ ընդդիմադիր այլ կառույցներին («Ջունուդ ալ-Շամ», «Նուր ադ-Դին Զինքի» և այլն), որոնց գործողությունների տարածքը հիմնականում ընդգրկում են Թուրքիային սահմանամեձ Սիրիայի հյուսիսարևմտյան տարածքները: Այս հատվածում ծագումով թյուրք բնակչության առկայությունը հնարավոր է դարձրել թուրքախոս իսլամականներին, այդ թվում ադրբեջանցիներին, ինտեգրվել Սիրիայի Լաթակիա, Իդլիբ, Հալեպ և ալ-Ռակկա նահանգներում ակտիվորեն գործող թյուրքական ծագմամբ ընդդիմադիր կառույցներին («Սուլթան Մուրադ», «Սուլթան Սուլեյման Շահ» և այլն) և իրականացնել ջիհադական պայքար:

---

16 г., https://regnum.ru/news/accidents/2111403.html.

2016-2017 թթ. ՁԼՄ-ներում դարձյալ հրապարակումներ եղան այլ էթնիկ խմբավորումների շարքերում (հիմնականում ծագումով նախկին ԽՍՀՄ-ը ներկայացնող իսլամականներից բաղկացած խմբավորումներում) ադրբեջանցի ջիհադականների հարմարվելու, արդյունավետ ինտեգրվելու և ջիհադական ակտիվ պայքար մղելու մասին: Բացի այս տեղեկություններից, ՁԼՄ-ներում հայտնվեցին տեսագրություններ, որտեղ ադրբեջանցի իսլամականները կոչ էին անում իրենց հայրենակիցներին միանալ ջիհադին:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Մերձավորարևելյան տարածաշրջանում իրականացվող ջիհադին միանալու կոչերը պայմանավորված էին նաև նրանով, որ ադրբեջանցիների հոսքը դեպի Սիրիա նվազել էր, և ադրբեջանցի իսլամականները կարիք ունեին համալրման, ինչի պատճառները հետևյալն են՝

- Թուրքիան ստիպված էր հնարավորինս վերահսկելի դարձնել Սիրիայի հետ սահմանային հոսքերը: Թուրքիայում հայտնված շատ ադրբեջանցիներ, որոնք ցանկություն ունեն անցնելու Սիրիա, թուրքական իրավապահ մարմինների կողմից ձերբակալությունների էին ենթարկվում[125]:
- Սիրիայում և Իրաքում կռվող իսլամական ծայրահեղ արմատական զանազան կառույցների կայանատեղիներին ուղղված կոալիցիոն օդուժի ավիահարվածներն ու ցամաքային արդյունավետ գործողությունները զսպում են նաև ադրբեջանցի իսլամականների՝ Մերձավոր Արևելք տեղափոխվելու ցանկությունը:

[125] Oxu.az, В Турции задержаны граждане Азербайджана, примкнувшие к ИГИЛ, 19 сентября 2016 г., http://ru.oxu.az/society/149800.

2013-2017 թթ. Սիրիայում և Իրաքում կռվող ադրբեջանցի իսլամականների շրջանում հանդիպել են նաև մահապարտ ահաբեկիչներ, որոնք պայթուցիկով բեռնված մեքենաների ղեկին նստած պայթել են հակառակորդի դիրքերին ուղղված ահաբեկչական հարձակումների ժամանակ: Դա խոսում է այն մասին, որ Մերձավոր Արևելքում Ադրբեջանը ներկայացնող իսլամականները գումար վաստակելու գայթակղությունից ու հեղինակություն ձեռք բերելու ցանկությունից զատ ջիհադական պայքարում առաջնորդվում են նաև իսլամական դավանական-գաղափարական մոտեցումներով[126]:

Եթե Սիրիայում և Իրաքում կռվող ադրբեջանցի իսլամականների էթնիկ կազմի մասին հստակ տվյալներ չկան (կարելի է ենթադրել, որ Մերձավոր Արևելքում ակտիվ գործող ադրբեջանցի իսլամականները հիմնականում ներկայացնում են Ադրբեջանի հյուսիսային սուննիաբնակ հատվածը), ապա ադրբեջանցիների թվաքանակի մասին որոշ տվյալներ կան: Մասնավորապես, ըստ 2017 թ. Ադրբեջանի Անվտանգության պետական ծառայության ղեկավար Մադաթ Գուլիևի հայտնած տվյալների՝ Ադրբեջանի շուրջ 900 քաղաքացի արդեն անդամակցել էր Սիրիայում և Իրաքում գտնվող իսլամական ծայրահեղական կառույցներին[127]: Հատկանշական է նաև 2017 թ. հոկտեմբերին տարածված այն տեղեկությունը, որ Թուրքիայում զգալի թվով իսլամականներ (300-1600) կանգնեցվել, հաշվառվել և ետ են ուղարկվել Ադրբեջան[128]:

---

[126] Մասնավորապես 2016-2017 թթ. հիշյալ մարտավարության կիրառման մասին համացանցային ռեսուրսներում հայտնված տեսանյութերում հանդիպել են նաև ադրբեջանցի մահապարտ ահաբեկիչներ:

[127] Apa.az, DTX rəisi, Azərbaycanın 900-dək vətəndaşı Suriya və İraqda terrorçulara qoşulub, 03 Mart 2017, http://apa.az/xeber-az/hadise/dtx-reisi-azerbaycanin-900-dek-vetendasi-suriya-ve-iraqda-terrorculara-qosulub.html.

[128] The Soufan Center, Beyond the Caliphate, Foureign Fighters and the Threat of

Մեր կարծիքով, ադրբեջանցի իսլամականների թիվը 1000-ից ավելի է, քանի որ՝

1. բազմաթիվ ադրբեջանցի իսլամականներ դեռևս գտնվում են Թուրքիայում և ցանկանում են մտնել Սիրիա, բայց չի ստացվում (այս ադրբեջանցիները, իհարկե, չեն ներառված 900-ի մեջ, քանի որ հնարավոր է՝ Թուրքիա են գնացել աշխատանքի կամ զբոսաշրջության):
2. Սիրիայում և Իրաքում կան բազմաթիվ ադրբեջանցիներ, որոնք ներգրավված են թյուրքական ծագմամբ ընդդիմադիր խմբավորումների շարքերում, և այդ կառույցները դժվար թե Ադրբեջանի իշխանությունների կողմից ծայրահեղական համարվեն:
3. Սիրիայում և Իրաքում կան ադրբեջանցիներ, որոնց ինքնությունը, գտնվելու վայրը բացահայտված չեն, հետևաբար նրանց գործունեության մասին չէր կարող հայտնի լինել Ադրբեջանի Անվտանգության ծառայության ղեկավարին:

Ինչ վերաբերում է այն իրողությանը, որ Թուրքիայից զգալի թվով ադրբեջանցի իսլամականներ արդեն ետ են ուղարկվել Ադրբեջան, ապա կարելի է փաստել, որ անկախ նրանց հետագա ճակատագրից նրանք վտանգ են ներկայացնում ոչ միայն Ադրբեջանի համար:

---

Returnees, October 2017, pp. 11-13, http://thesoufancenter.org/wp-content/uploads/2017/10/Beyond-the-Caliphate-Foreign-Fighters-and-the-Threat-of-Returnees-TSC-Report-October-2017.pdf.



*Աղրբեջանցվի իսլամականները Սիրիայից սպառնում են ալիևյան վարչախմբին*




*Իսլամական կայքէջերից մեկում հայտնված լուսանկար, որտեղ պատկերված էին Աբու Ումար ալ-Շիշանին և «Իսլամական պետու-թյան» դրոշով ամբողջությամբ պատված Աղբեջանը*

## 3.4. Իսլամական ծայրահեղ արմատականությունը Վրաստանում

Ներկայում Վրաստանում ևս նկատելի են իսլամական ծայրահեղ արմատականության ավելացման միտումներ՝ չնայած մուսուլմանների թվաքանակը մեր հարևան երկրում կազմում է ընդհանուր բնակչության շուրջ 10 տոկոսը (մոտ 430.000): Պանկիսի կիրճը համարվում է իսլամական ծայրահեղականության բնօրրանը, որտեղ իսլամի արմատական գաղափարները ներթափանցեցին չեչեն փախստականների միջոցով, և 1990-ական թթ. վերջում և 2000-ական թթ. սկզբում աստիճանաբար ավելացրին իրենց ազդեցությունը տեղի բնակչության (հիմնականում կիստերի[129]) շրջանում: Իսլամի դրույթների արմատական մեկնաբանությունները ընդգրկել են կյանքի բոլոր կողմերը: Ճիշտ է՝ ծայրահեղ արմատականների թվաքանակը Վրաստանում քիչ է, բայց միտում ունի ավելանալու: Դա նկատելի է նաև Վրաստանի հարավարևելյան, Հայաստանին սահմանակից Քվեմո Քարթլիի ադրբեջանաբնակ շրջանում: Ըստ որոշ հասարակական կազմակերպությունների տրամադրած տվյալների՝ Քվեմո Քարթլիում ադրբեջանցի երիտասարդների մոտ 20 տոկոսն արդեն հարել է իսլամական ծայրահեղ արմատականությանը:

Ըստ այլ տեղեկությունների՝ Վրաստանում կան ադրբեջանական իսլամական ծայրահեղ արմատականության ակտիվութ-

[129] Չեչենների էթնիկ խումբ, որը բնակվում է Վրաստանի Պանկիսի կիրճում:

յան երեք կենտրոններ՝ մայրաքաղաք Թբիլիսիի արվարձանում՝ Պոնիչալայում (հետաքրքիր է, որ 2013 թ. հուլիսին այստեղ այրվել էր Հայաստանից դեպի Ռուսաստան ուղևորվող բեռնատար ավտոմեքենա)[130], որտեղ կան մոտ 50 ծայրահեղ արմատական աղբբեջանցիներ, որոնք կապված են Բաքվի իսլամական ծայրահեղականների հետ, Քվեմո Քարթլիի Քեշալո բնակավայրում, որտեղ գործում է իսլամական ծայրահեղ արմատականներից սպասարկող մզկիթ, և Քարաջալա բնակավայրում, որտեղ նույնպես գործում է արմատականների հավաքատեղի:

Ինչ վերաբերում է Վրաստանի Պանկիսի կիրճում իսլամական ծայրահեղ արմատականությանը, ապա պետք է նշել, որ նման գաղափարները այստեղ նաև տարածում են չեչեն փախստականները հատկապես չեչենական երկրորդ պատերազմի (1999-2000 թթ.) ժամանակ[131]: Մոտ 7000 փախստականների շարքերում Պանկիսի կիրճում հայտնվեցին չեչեն զինյալներ և այլազգի իսլամականներ մուսուլմանական տարբեր երկրներից, որոնք Վրաստանի այս հատվածն օգտագործեցին ոչ միայն իսլամական արմատական գաղափարներ տարածելու, այլ ռազմաբազաներ ստեղծելու, ռազմական պատրաստություն կազմակերպելու և այստեղից հարևան Ռուսաստանում ահաբեկչական հարձակումներ իրականացնելու համար[132]: Չնայած վրացական իշխանությունների և նրանց աջակցող ամերիկյան զինուժի կողմից Պանկիսի կիրճում իսլամականների դեմ 2002 թ. ամռանը կազմակերպված անվտանգային և հակաահաբեկչական միջոցա-

---

[130] Արմենպրես, Թբիլիսիի Պոնիչալա թաղամասում ՀՀ-ից ՌԴ ուղևորվող բեռնատար ավտոմեքենա է այրվել է, հուլիսի 19, 2013 թ., https://armenpress.am/arm/news/726663/:

[131] European Centre For Minority Issues, Georgia's Muslim Community: A Self-Fulfilling Prophecy?, February 2012, pp. 4-14, http://www.ecmi.de/uploads/tx_lfpubdb/-Working_Paper_58_En.pdf.

[132] The Guardian Online, US targets al-Qaida hideout in Georgia, 15 February 2002, http://www.guardian.co.uk/world/2002/feb/15/afghanistan.ia ntraynor.

ռումներին՝ իսլամական ծայրահեղականությունը հետագա տասնամյակում էլ ավելի տարածում գտավ:

Իսլամական ծայրահեղ արմատականության տարածման հիմնական պատճառներից կարելի է նշել Պանկիսի կիրճում ապրողների սոցիալական բավական անմխիթար վիճակն ու գործազրկության բարձր մակարդակը հատկապես մուսուլման երիտասարդների շրջանում, որոնք փորձում են սոցիալական անարդարության և այլ խնդիրների բացատրությունը գտնել նաև իսլամական դրույթների արմատական մեկնաբանությունների մեջ:

Ըստ հետազոտական որոշ գնահատականների՝ 2011 թ. հունիսի դրությամբ Պանկիսի կիրճում գտնվող գյուղերի մուսուլման երիտասարդների 60-80 տոկոսը հարել է իսլամական ծայրահեղականությանը: Կան ուսումնասիրություններ, որոնք վկայում են նաև, որ Վրաստանի Պանկիսի կիրճում իսլամական ծայրահեղ արմատականությունը ֆինանսավորվում է Պարսից ծոցի միապետություններից:

Վրաստանի այս հատվածում նկատելի են նաև որոշ հակասություններ իսլամի ավանդական ուղղությունների և իսլամական ծայրահեղ արմատականության միջև, որի պատճառը հին ու նոր սերնդի մուսուլմանների միջև անջրպետ ստեղծելու նպատակով տեղի որոշ մզկիթների որդեգրած քաղաքականությունն է[133]:

Հատկանշական է 2011 թ. հուլիսի 7-ին Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության տնօրեն Ալեքսանդր Բորտնիկովը, մեկնաբանելով Պանկիսի կիրճից դեպի Ռուսաստան իսլամական զինյալ խմբավորման ներթափանցման մասին տեղեկությունը, հայտարարեց, որ իսլամական ծայրահեղ արմատականության որոշ առաջնորդներ փորձում են Վրաստանի տա-

---

[133] European Centre For Minority Issues, Նույն տեղում:

րածքը օգտագործել դեպի Ռուսաստան ներթափանցելու համար[134]: Այդ հայտարարության ի պատասխան՝ Վրաստանի ՆԳՆ հերքեց այդ մեղադրանքները՝ նշելով, որ Վրաստանի Պանկիսի կիրճում իսլամական ծայրահեղ արմատական ուժեր չկան: Դրանք ռուսական հատուկ ծառայությունների մտացածին տեղեկություններն են[135]: Իհարկե վրացական իշխանությունները փորձում էին մեղմացնել իրավիճակը, որն իրոք մտահոգիչ էր վրաց-ռուսական սահմանին, մասնավորապես Պանկիսի կիրճի երկայնքով: Այս համատեքստում, արդեն 2012 թ. օգոստոսին Վրաստանի հյուսիսարևելյան Լոպոտայի կիրճում իսլամականների և վրաց իրավապահ մարմինների բախումների մասին տեղեկություններ հայտնվեցին[136]: Բախումների ժամանակ զոհվել էին Վրաստանի ներքին գործերի նախարարության հատուկ նշանակության ջոկատի երեք և վիրավորվել հինգ ծառայող, ոչնչացվել էր իսլամականների 11 հոգուց բաղկացած դիվերսիոն խմբավորումը[137]:

Վրաստանում իսլամական ծայրահեղ արմատականության առկայության ու դրա վտանգավորության ապացույցը եղավ նաև 2017 թ. նոյեմբերի 21-22-ին Վրաստանի մայրաքաղաքում տեղի ունեցած միջադեպը: Այդ օրերին Թբիլիսիի թաղամասերից մե-

---

[134] Риа Новости, ФСБ: боевики планируют использовать Грузию для проникновения в Россию, 7 июля, 2011 г., https://ria.ru/defense_safety/20110707/3984-24057.html.

[135] Grani.ru, Ministry of Internal Affairs of Georgia, Reports that militants crossed into Russia from Pankisi nonsense, 2 July 2011, http://grani.ru/Politics/World/Europe/G-eorgia/m.189681.html.

[136] Ազատություն ռադիոկայան, Ընդհարումներ ռուս-վրացական սահմանին. կան զոհեր, օգոստոսի 29, 2012 թ., https://www.azatutyun.am/a/24692170.html:

[137] Հատկանշական է այն, որ ըստ վրացական կողմի՝ Լոպոտայի կիրճում իսլամականները հայտնվել էին Ռուսաստանի տարածքից, որտեղ այդ ժամանակ տեղի էին ունենում հակաահաբեկչական գործողություններ, մինչդեռ ռուսական կողմը մեղադրեց վրացական իշխանություններին Վրաստանի տարածքից դեպի Ռուսաստան իսլամական խմբավորումներին ուղղորդելու մեջ:

կում իրավապահ մարմինները շրջապատել էին շենքերից մեկը, որտեղ թաքնվել էին իսլամականներ: Անարդյունք բանակցություններից հետո իրավապահ մարմինները սկսեցին հատուկ գործողություններ: Գրոհող իրավապահ մարմինների աշխատակիցների դեմ իսլամականները կիրառեցին ինքնաձիգ ու նռնակներ: Արդյունքում ոչնչացվեցին 3 իսլամական, ձերբակալվեց 1-ը: Իրավապահ մարմինների աշխատակիցներից 1-ը զոհվեց, 3-ը վիրավորվեցին: Այդ միջադեպը ոչ միայն ապացույցն էր Վրաստանում իսլամական ծայրահեղ արմատականության արմատների, այլև նման գաղափարներով առաջնորդվող իսլամականների մոտ զինամթերքի առկայության ու Վրաստանում ծրագրավորվող հետագա վտանգավոր ահաբեկչական դրսևորումների մասին[138]:

Ներկայում Վրաստանում՝ մասնավորապես Պանկիսի կիրճում իսլամական ծայրահեղ արմատական գաղափարների տարածման վրա ազդում են Մերձավոր Արևելքում ընթացող զարգացումները՝ ջիհադական պայքարն ու իսլամական արմատական տիրույթում ի հայտ եկած նոր իրողությունները (մասնավորապես «Իսլամական պետության» ի հայտ գալն ու Կովկասի իսլամական արմատական տիրույթում նկատվող տարաձայնությունները): Պանկիսի կիրճում դա դրսևորվում է այստեղ ակտիվ գործող իսլամական ծայրահեղական ցանցերի գործունեությամբ ու Մերձավորարևելյան տարածաշրջանում աչքի ընկնող

[138] Ըստ տարածվող տեղեկությունների՝ Վրաստանի մայրաքաղաքում իրականացված հատուկ գործողությունների հետևանքով սպանվածների մեջ էր հայտնի իսլամական Ահմեդ Չատաևը, ով ակտիվ ներգրավված է եղել Սիրիայում և Իրաքում իրականացվող ջիհադին, հարել է Իսլամական պետությանը: Նրան էր վերագրվում նաև Թուրքիայի Ստամբուլ քաղաքում իրականացված ահաբեկչական պայթյունների կազմակերպումը, տե՛ս Кавказский Узел, Тбилисцы из поврежденного при спецоперации дома не опознали Чатаева, 24 ноября, 2017 г., http://www.kavkaz-uzel.eu/articles/312901/.:

իսլամական ծայրահեղ արմատական կառույցների համար զինյալներ հավաքագրելու գործընթացով:

Մերձավոր Արևելքում տեղի ունեցող ջիհադական պայքարում Վրաստանը նույնպես ունեցել է ներկայացուցիչներ: Ըստ որոշ տեղեկությունների՝ Սիրիայում և Իրաքում ծայրահեղ արմատական խմբավորումների շարքերում կռվող իսլամականներից 200-ը հենց Վրաստանից էին[139]: Բացի դա, «Իսլամական պետության» առանցքային առաջնորդներից Աբու Ումար ալ-Շիշանին (Թարխան Բաթիրաշվիլի) ծնունդով Վրաստանի Պանկիսի կիրճից էր: Նա կարճ ժամանակում դարձավ «Իսլամական պետության»՝ Կովկասը ներկայացնող առանցքային առաջնորդներից մեկը:



***Աբու Ումար ալ-Շիշանի (Թարխան Բաթիրաշվիլի. սպանվել է Իրաքի Մոսուլ քաղաքի շրջակայքում 2016 թ. հունիսին)***

[139] Global Voices, Coucasus, Keeping Islamic State Out of Georgia, https://iwpr.net/global-voices/keeping-islamic-state-out-georgia.



*Թարխան Բաթիրաշվիլին Վրաստանի բանակում ծառայության ժամանակ*








منعا من انتقال المُسلمين لأراضيهم، لقد مزق الطواغيت الخلافة الإسلامية



Աբու Ումար Ալ-Շիշանին ծնվել էր 1986 թ. Վրաստանի Պանկիսի կիրճի Բիրկիանի գյուղում: Նա, «Ջայշ ալ-Մուհաջիրին ուա ալ-Անսար» խմբավորման հետ դեռևս 2013 թ. կեսերին հավատարմության երդում տալով Աբու Բաքր Ալ-Բաղդադիին, ԻՇԻՊ-ի (հետագայում՝ «Իսլամական պետություն») կազմում ակտիվորեն մասնակցեց տարբեր ճակատամարտերի՝ դառնալով ջիհադական պայքարի առանցքային դերակատարներից մեկը Սիրիայում: Ալ-Շիշանիի հայտնվելը զանազան ռազմաճակատներում մեծ ցնծություն ու խանդավառություն էր առաջացնում իսլամականների շրջանում[140]: Թերևս սա բացատրվում էր նրանով, որ մինչև սիրիական հակամարտությունն Աբու Ումար Ալ-Շիշանին անցել էր ռազմական պատրաստություն՝ 2006-2007 թթ. հատուկ հետախուզական ջոկատի կազմում ծառայելով Վրաստանի կանոնավոր բանակում: Հաշվի առնելով ՆԱՏՕ-Վրաստան այդ ժամանակվա ռազմական համագործակցությունը՝ հավանաբար Ալ-

---

[140] فرحة الأخوة بقدوم الشيخ عمر الشيشاني حفظه الله إلى إعزاز https://www.youtube.com/watch?v=n-yTFX3MQxQ.

